

Հաստատված է

Սկզբնական կրթության ֆակուլտետի

խորհրդի

հ/մ 4 նիստում

29-ը նոյեմբերի 2022 թ.մ

---

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022

## ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

### I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:

Սկզբնական կրթության ֆակուլտետի 2022 թ. աշխատանքներն իրականացվել են 2021-2025թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի համաձայն:

Ֆակուլտետը հաշվետու ժամանակահատվածում իր գործունեությունը ծավալել է ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանի համաձայն (Տե՛ս՝ 2021-22 թվականի ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը), որտեղ արտացոլված և քննարկվող հարցերը բխում են ՀՊՄՀ 2021-2025թ.թ. ռազմավարական ծրագրի կատարման պլանից:

(<https://aspu.am/website/images/files/51a25c09.pdf>)

Ֆակուլտետը հաշվետու ժամանակահատվածում հավատարիմ է եղել իր առաքելությանը՝ Սկզբնական կրթության ֆակուլտետը Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ստորաբաժանում է, որը նպատակաուղղված է հանրակրթության ոլորտում, մասնավորապես, նախադպրոցական ուսումնական հաստատությունների և տարրական դպրոցի, ՀՀ և միջազգային աշխատաշուկայում մրցունակ, մասնագիտական կայուն գիտելիքներով, սոցիալական պատասխանատվության և ժողովրդավարական արժեքներով առաջնորդվող մասնագետների պատրաստմանը:

ՍԿ ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի նշված բոլոր ուղղություններով 2022 թվականի համար իրականացվել են համակարգված աշխատանքներ ֆակուլտետի համապատասխան հանձնախմբերի կողմից: Դրանք են.

- ուսումնական հարցերով զբաղվող աշխատանքային խումբ,
- կրթության որակի ապահովման աշխատանքային խումբ,
- ուսումնամեթոդական հանձնաժողով,
- համալսարանը ներկայացնող և դիմորդների մասնագիտական կողմնորոշման հարցերով զբաղվող աշխատանքային խումբ,
- ուսանողների կամավորական գործունեությունը համակարգող խումբ:

2022 ուսումնական տարում ֆակուլտետը հրավիրել է խորհրդի 11 նիստ: Խորհրդի նիստերին քննարկվել են ֆակուլտետի գործունեությանն առնչվող տարաբնույթ հարցեր. ուսումնական գործընթացի, մանկավարժական պրակտիկաների կազմակերպում, կրթության որակի բարելավում, ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակի միջոցառումներ, «Մուլտիմեդիա» լաբորատորիայի գործունեության բարելավում, մասնագիտական կրթական ծրագրերի կազմում/վերանայում, դասախոսների և ուսանողների գիտական և հետազոտական գործունեություն, համագործակցություն կրթական հաստատությունների հետ, ուսանողական կյանք, կամավորական, հասարակական և մշակութային գործունեություն և այլն:

Նշված ժամանակահատվածում բավականին ակտիվ գործել են սկզբնական կրթության ֆակուլտետի տեղեկատվական հարթակները , ամբիոնային էլեկտրոնային էջերը, սկզբնական կրթության ֆակուլտետի Facebook-յան էջը (<https://www.facebook.com/profile.php?id=100030410970717> , <https://skzbnakanafakultet.school.blog/?fbclid=IwAR1zk1JcO7FZ282bF5EUL96viCmXQjKvhk48-CxlgdEaTrOe8yOirpUONI>

), սկզբնական կրթության ֆակուլտետի ՌԻԽ-ի Facebook-յան էջը (<https://www.facebook.com/skzbnakan> ), ուսանողների գիտական ընկերության և ուսանողների կամավորական գործունեության Google-classroom էլեկտրոնային էջերը(<https://classroom.google.com/c/MjU5NzUxMzg0ODha>, <https://classroom.google.com/c/NDE4NzM2MjU1MDVa> ) : Այս համատեքստում եղել է սերտ և պարբերական կապ ՀՊՄՀ կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի հետ:

Ֆակուլտետը նշված ժամանակահատվածում ակտիվ համագործակցել է ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության, կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի հետ: Ֆակուլտետի գործունեության բնականոն ընթացքն ապահովելու նպատակով պարբերաբար կազմակերպվել են առցանց (Google-Meet գործիքով) ինչպես նաև առերես, հանդիպումներ, քննարկումներ ուսանողների և դասախոսների հետ: Այս հանդիպումները միտված են եղել ֆակուլտետի գործունեության արդյունաավետ կազմակերպմանը. որակյալ կրթական գործընթացի անխափան կազմակերպում, կարգապահության, նոր կարգերի ներկայացում և այլն: Դեկանատը մշտապես հետևում է, որպեսզի նոր կարգերի (որոնց մշակմանը դեկանատի ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցում են), հրամանների, տարաբնույթ ժամանակացույցների, նոր նախագծերի, կրթական ծրագրերի և գիտաժողովների, ուսանողների հեռացումների, վերականգնումների և այլնի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, նաև էլեկտրոնային տարբերակով, ժամանակին տրամադրվի ամբիոններին, դասախոսներին և ուսանողներին, կրթական հաստատություններին, պրակտիկայի բազա հանդիսացող դպրոցներին: Ֆակուլտետում պարբերաբար հրավիրվում են նաև դեկանատի նիստեր, որտեղ քննարկվում են ինչպես ուսումնական, կազմակերպչական և կարգապահ-հա-կան, այնպես էլ կրթության որակին առնչվող հարցեր (*Stu' դեկանական նիստերի արձանագրությունները*):

Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանով նախատեսված աշխատանքների մեծ մասն հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են, վերջինիս մասին տեղեկատվությունը ներկայացվել է ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը (*Stu' ՍԿ ֆակուլտետի ՌԾ-ի կատարողականի հաշվետվությունը*):

Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի մշակմանը ներգրավված են ֆակուլտետի որակի ապահովման խմբի անդամները, ինչպես նաև ուսանողներ, ովքեր մասնակցել են բանավոր հարցումների:

Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի հիմնական ուղղություններն ու դրանց շուրջ կատարվող աշխատանքները պարբերաբար քննարկվել են ամբիոնների նիստերին (*Stu' Մաթեմատիկայի և նրա ուսուցման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. փետրվարի 25-ի թիվ 7 նիստի արձանագրություն, Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի սեպտեմբերի 19-ի թիվ 2*

նիստի արձանագրություն, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի սեպտեմբերի 22-ի նիստի թիվ 2 արձանագրություն):

## II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:

Ֆակուլտետում աշխատանքների կազմակերպումը սկսվում է պլանավորման փուլից: Ուսումնական տարվա սկզբում մշակվել է աշխատանքային պլան (Տես՝ 2022-2023 ուսումնական տարվա ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը՝ հաստատված 2022թ.սեպտեմբերի 27-ի թիվ 1 նիստով), որը համապատասխանեցված է ֆակուլտետի ռազմավարական պլանի գործողությունների պլանին :

Ֆակուլտետի աշխատանքային պլանին համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են աշխատանքներ, որոնց մասին հաշվետվությունները ներկայացվել են ֆակուլտետի խորհրդի նիստերում, ինչպես նաև ամբիոնների նիստերում:

Պլանավորման մեջ ներառված են աշխատանքի հետևյալ ուղղությունները.

1. ուսումնական գործընթացի կազմակերպում,
2. կրթության որակի ապահովում,
3. ֆակուլտետի ամբիոնների աշխատանքների կազմակերպում,
4. ուսանողների աշխատանքների համակարգում,
5. մանկավարժական պրակտիկա և այլն:

Այս ուղղություններով աշխատանքները պլանավորվում են ուսումնական տարվա սկզբին:

Իրականացված աշխատանքների վերաբերյալ ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստերին ներկայացվում են հաշվետվություններ (Տես՝ ՍԿ ֆակուլտետի փետրվարի 14-ի նիստի թիվ 8, ֆակուլտետի մարտի 1-ին թիվ 9, մարտի 22-ի թիվ 10 նիստի և այլ արձանագրություններ):

Հաշվետվությունները որպես կանոն վերլուծական բնույթ են կրում, ներկայացվում են առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ: Առաջարկությունների հիման վրա կազմակերպված գործընթացները ևս մեկ անգամ ենթարկվում են վերլուծության, քննարկվում են առաջարկությունների արդյունավետությունը, ուժեք և թույլ կողմերը:

Ֆակուլտետի խորհրդի նիստերում քննարկվող բոլոր հարցերին, որոշումների կայացմանը

դասախոսները և ուսանողները տեղեկանում են խորհրդի կազմում ընդգրկված իրենց ներկայացուցիչների միջոցով (*Տես՝ 2021-2022 ուսումնական տարվա ֆակուլտետի խորհրդի կազմը*), ինչպես նաև իրենց հուզող հարցերը բարձրացվում են ամբիոնային նիստերի, ուսանողների պարագայում՝ ուսանողական խորհրդի նիստերի ժամանակ, այնտեղից էլ՝ առաջարկությունների տեսքով՝ ֆակուլտետի խորհուրդ, ապա նաև համալսարանի համապատասխան կառույցներ:

Ֆակուլտետի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման համար օգտագործվում են տեղեկատվության բոլոր հնարավոր եղանակները (Google classroom էլեկտրոնային կրթական հարթակ, համալսարանի կայքէջ, Facebook-յան էջեր, հեռուստացույց, հայտարարությունների տախտակ, ներքին գրություններ...) համալսարանական կյանքին և ֆակուլտետին առնչվող բոլոր տեղեկատվությունը դասախոսներին և ուսանողներին ժամանակին տրամադրելու համար:

Կազմակերպվում են նաև ֆակուլտետի ընդլայնված նիստեր, որոնք անցկացվել են առերես, հեռավար ձևաչափով: Պլանավորման ընթացքում ներառված բոլոր ուղղությունների շուրջ կատարված աշխատանքների մասին մանրամասն տեղեկատվությունը տրամադրվում է ամբիոնների դասախոսներին, նրանցից հետադարձ կապ և առաջարկություններ ստանալու նպատակով:

Առցանց և առերես տարբերակներով ամեն օր դեկանատի կողմից իրականացվել է դասերի վերահսկողություն, կապ է հաստատվել ուսանողների հետ, ճշտվել առկա բացակայությունների պատճառները, դասերի իրականացման ընթացքը և այլն:

Աշխատանքների արդյունավետությունը գնահատվում է հետադարձ կապի և մշտադիտարկումների միջոցով: Մշտադիտարկումների արդյունքները քննարկվում են ամբիոնային և ֆակուլտետի խորհրդի առցանց նիստերի ընթացքում, խնդրո առարկա հարցերի բարելավման ուղղությամբ ևս արվում են առաջարկություններ (*առաջարկությունները ներկայացվում են հաշվետվությունների և զեկույցների, ելույթների տեսքով*), վերջիններս էլ ներկայացվում են համալսարանի համապատասխան կառույցներ, տեղադրվում Google classroom էլեկտրոնային կրթական հարթակում, կամ ուղարկվում աշխատակիցների էլեկտրոնային հասցեներին:

Այսպես օրինակ՝

- մանկավարժական պրակտիկաների կազմակերպումը. նախապատրաստական կազմակերպչական և բովանդակային սեմինար քննարկումներ ուսանողների, մեթոդիստների դպրոցների ներկայացուցիչների մասնակցությամբ,
- պրակտիկայի ընթացքում ուսանողների հետ առցանց քննարկում, ծագած խնդիրների վերհանում, լուծումների առաջադրում,
- ընթացքի, բովանդակության բարելավման ուղղությամբ, առաջացած խնդիրների վերաբերյալ պրակտիկայի ղեկավարների պարբերական հաշվետվություններ ամբիոնային և ֆակուլտետի խորհրդի նիստերին,
- պրակտիկայի ավարտին՝ ամփոփիչ սեմինարների կազմակերպում,
- թղթապանակների պաշտպանություն,

- արդյունքների վերլուծությունների հիման վրա առաջարկությունների ձևակերպում և ամփոփիչ հաշվետվության ներկայացում:

Ֆակուլտետի աշխատանքներում ներգրավված են արտաքին շահակիցները՝ դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ: Նրանց հետ քննարկվում են ֆակուլտետում իրականացվող աշխատանքները, դրանց արդյունքները: Արտաքին շահակիցների հետ համագործակցության ձևերը, ներգրավումը ֆակուլտետի աշխատանքներում քննարկվել են հաշվետու տարվա ընթացքում ֆակուլտետի խորհրդի նիստերին և կայացվել են որոշումներ: (*Տես՝ ֆակուլտետի խորհրդի ապրիլի 28-ի նիստի թիվ 11 արձանագրությունը*): Մասնավորեպես, այս հարցի վերաբերյալ նշված նիստի ընթացքում որոշում է կայացվել ակտիվացնել համագործակցությունը արտաքին շահառուների հետ, գտնել համագործակցության նոր ճանապարհներ: Ամբիոնների կողմից (մասնավորապես նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի կողմից) կազմակերպվում են հանդիպումներ արտաքին շահառուների հետ: Քննարկվում են մասնագիտական կարիքները, ոլորտների խնդիրներն ու միասին կայացնում որոշումներ, որոնք հաշվի են առնվում տարբեր առարկաների վերջնարդյունքների ձևակերպման ընթացքում, ինչպես նաև առարկաների բովանդակության մեջ կատարվում են փոփոխություններ:

Հետևողական աշխատանքների, մշտադիտարկման արդյունքների վերլուծության արդյունքում բարելավվել են մանկավարժական պրակտիկայի ընթացքում մեթոդիստների և մանկավարժների համագործակցությունը, թղթապանակների պաշտպանության համապատասխանեցումը վերջնարդյունքներին, բարձրացել է ուսանողների պատասխանատվությունը կատարվելիք աշխատանքների նկատմամբ (*Տես՝ ֆակուլտետի խորհրդի նիստի մայիսի 31-ի թիվ 12 նիստ, ֆակուլտետի խորհրդի թիվ 13 նիստ, հուլիսի 7-ի թիվ 14 նիստի արձանագրություններ*):

Իրականացված նիստերի որոշումների կատարման մասին ամբիոնները ներկայացնում են հաշվետվություններ:

Կատարված աշխատանքների հիման վրա 2021-2022 ուսումնական տարվա ամռանը ներկայացվել է ֆակուլտետի հաշվետվություն, որի յուրաքանչյուր բաժին ավարտվել է SWOT վերլուծությամբ (*Տես՝ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի սկզբնական կրթության ֆակուլտետի կադրաթիվ աշխատանքների հաշվետվություն (2021-2022 թթ.)*): Հաշվետվությունը խորհրդում ներկայացվելուց բացի, ուղարկվել է ամբիոններ՝ առաջարկություններ ներկայացնելու, ինչպես նաև SWOT վերլուծության ուժեղ և թույլ կողմերը քննարկելու նպատակով:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին:

Ֆակուլտետը սերտ համագործակցելով ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ մշտական աշխատանքներ է իրականացնում մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման ուղղությամբ:

Այս աշխատանքների պատասխանատուները ֆակուլտետի դեկանն է, ամբիոնի վարիչներն ու կրթության որակի աշխատանքային խումբը: Հաշվետու ժամանակաշրջանում մասնագիտական կրթական ծրագրերի, ինչպես նաև առարկայական նկարագրերի շուրջ աշխատանքները պատասխանատուների ուշադրության կենտրոնում են: ՄԿԾ-ների պատասխանատուների համար ֆակուլտետը ձեռնամուխ է եղել մշակել գործառույթներ, սակայն այդ աշխատանքները դեռևս դանդաղում են: Ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանում ունենք պլանավորած նմանատիպ գործողություն, որը նախատեսել ենք ավարտել 2024 թվականին, համաձայնեցնելով բուհի համապատասխան ստորաբաժանման հետ (*Տես՝ Սկզբնական կրթության ֆակուլտետի 2021-2025 ռազմավարական պլանի գործողությունների պլանը*):

2022 թվականի ամռանը ֆակուլտետը նախաձեռնել և իրականացրել է առցանց սեմինարներ մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակային, կառուցվածքային և այլ առանձնահատկություններին նվիրված, ապա նաև մասնակցել է ռեկտորատի կողմից կազմակերպված սեմինարներին (*իրականացվել են Հ.Թադևոսյանի, Ս. Ասատրյանի կողմից*): Այդ սեմինարների արդյունքում փոփոխությունների են ենթարկվել ամբիոնների կողմից դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերն ու թեմատիկ պլանները, գնահատման բաղադրիչը: Շեշտը դրվել է առարկայական նկարագրության, գործնական, ինքնուրույն աշխատանքների համապատասխանությանը կրթական ծրագրի վերջնարդյունքներին: ՄԿԾ-ների վերափոխման արդյունքում փոփոխության են ենթարկվել ամբիոնների կողմից դասավանդվող առարկաների վերջնարդյունքները, առաջադրանքները, դրանց բովանդակությանն գնահատման մեթոդները: Այդ աշխատանքները շարունակվում են մինչ օրս:

ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները, ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և նմանատիպ այլ աշխատանքները յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի ուշադրության կենտրոնում են: Այդ հարցերը քննարկվում են ֆակուլտետի խորհրդի նիստերում: (*Տես՝ ֆակուլտետի խորհրդի նիստի հուլիսի 7-ին թիվ 14 արձանագրություն*)

ՄԿԾ-ների բարելավման, ինչպես նաև առարկայական նկարագրերի և թեմատիկ պլանների վերափոխման ընթացքում հիմք են ընդունվել ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի պահանջները: Այդ երկու փաստաթղթերը տրամադրվել են ինչպես ամբիոնների որակի պատասխանատուներին, այնպես էլ դասախոսներին՝ դրանց հետ ծանոթանալու և ծրագրերը համապատասխանեցնելու նպատակով: (*Այդ աշխատանքներն իրականացվել են ԿԳՄՄՆ նախարարի No 783-ԱԻ «28» ապրիլի 2022թ. հրամանի հիման վրա*)

ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ աշխատանքները շարունակական բնույթ են կրում:

Մասնավորապես, այս ուսումնական տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. ՄԿԾ-ների բարելավման և վերանայման ուղղությամբ ֆակուլտետում ձևավորվել են

աշխատանքային խմբեր, որտեղ ընդգրկվել են արտաքին և ներքին շահակիցներ: Աշխատանքային խմբերը վերանայել են առարկայական նկարագրերը /այդ աշխատանքները դեռ շարունակվում են/, համապատասխանեցնելով դրանք կրթական ծրագրերի վերջնարդյունքներին: Վերջնարդյունքների մշակման, դրանց համապատասխան առարկաների բովանդակության, դասավանդման և գնահատման մեթոդաբանության համապատասխանեցումը մեր ուշադրության կենտրոնում է, այդ հարցերը պարբերաբար քննարկվում են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի նիստերի ընթացքում, նպաստելով կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանը: Ֆակուլտետում պարբերաբար իրականացվում են մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկում, որոնց արդյունքները հաշվի կառնվեն ՄԿԾ-ները վերանայելու ընթացքում: Կատարվող աշխատանքների հիմքում ՀՊՄՀ-ի գիտխորհրդի որոշումը: (Տես՝ գիտխորհրդի հոկտեմբերի 28-ի N1-L որոշումը՝ <https://aspu.am/website/images/files/10f3b684.pdf> )

Մշտադիտարկման ընթացքում իրականացված SWOT վերլուծությունների արդյունքում փոփոխություններ են կատարվում ինչպես առարկաների բովանդակության, այնպես էլ դասավանդման ռազմավարության մեջ:

2.Վերափոխվել են նաև առանձին դասընթացների բովանդակային բաղադրիչները՝ տարրական դասարաններում ուսումնական մի շարք առարկաներում ձեռնարկատիրական կրթության և ֆինանսական կրթության բաղադրիչների ինտեգրման համատեքստում. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի «Տեխնոլոգիա և դասավանդման մեթոդիկա», «Ես և շրջապատող աշխարհը», «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա» դասընթացների նկարագրերն ու համապատասխանաբար ուսումնական փաթեթները (*Տես՝ նշված դասընթացների ԱՈՒՄՓ-ները*), որպես ընտրովի դասընթաց մագիստրատուրա 2-րդ կուրսում ներմուծվել է «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցում» դասընթացը: Ինֆորմատիկայի ամբիոնի հետ համագործակցության արդյունքում փոփոխությունների է ենթարկվել SCS հենքային դասընթացի բովանդակությունը: Այդ փոփոխությունները պայմանավորված են ֆակուլտետում մուլտիմեդիոն ծրագրերի շուրջ իրականացվող աշխատանքներով: Ծրագրերի համապատասխանեցման միջոցով նպաստելու ենք ապագա ուսուցիչների և դաստիարակների մեդիակոմպետենցիաների ձևավորմանը:

3.Պարբերաբար իրականացվում է բենչմարկինգ (հենանշում), որի արդյունքում մի շարք առարկայական նկարագրերում կատարվել են էական փոփոխություններ:

4.Ամբիոններում ստեղծվել են ընտրովի դասընթացների բազաներ, որոնց վերջնարդյունքները համապատասխանեցվել են մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքներին, և որոնք նպաստում են ուսանողների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը: Այդ բազաներում ընդգրկված առարկաները համապատասխանեցվում են մանկավարժական պրակտիկաների արդյունքում վերհանված այն բացերին, որոնք լրացման կարիք ունեն:

5.Ֆակուլտետում յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին շրջանավարտների շրջանում իրականացվում են հարցումներ ՄԿԾ-ների բավարարվածության վերաբերյալ: Արդյունքները քննարկվել են ֆակուլտետի խորհրդի նիստում: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել են

առաջարկություններ մասնագիտական կրթական ծրագրի արդյունավետությունը բարելավելու ուղղությամբ: Մասնավորապես առաջարկվել է.

- արդիականացնել դասընթացների ուսումնական նյութերը, համապատասխանեցնելով դրանք գիտության վերջին նվաճումներին,
- ընտրել արդյունավետ գնահատման մեթոդներ, դրանք համապատասխանեցնել առարկայի վերջնարդյունքներին, ապահովել դասավանդման, գնահատման մեթոդների տրամաբանական կապը,

ուժեղացնել առարկաների գործնական բաղադրիչը, թեմաների շուրջ կատարվող առաջադրանքները համապատասխանեցնել առարկայի վերջնարդյունքներին,

- և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում ուժեղացնել ուսանողների գիտահետազոտական բաղադրիչը,
- մեկ առարկայի, ինչպես նաև մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների ձևավորվածության համատեքստում իրականացնել ուսանողների կարիքների վերհանում, դրանց բավարարման ուղղությամբ արդյունավետ աշխատանքների իրականացում,
- համապատասխանեցնել դասընթացի և մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների:
- անընդհատ անդրադառնալ և քննարկել դասընթացների վերջնարդյունքները ուսանողների հետ:

Առաջարկությունների տեղայնացման հնարավորությունները քննարկվել են նաև ամբիոնների նիսստերում:

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են այն խնդիրները, որոնք շուրջ աշխատանքներ պետք է իրականացվեն բարելավելու ուղղությամբ: Մանսավորապես.

- հարցված ուսանողների գրեթե մեծ մասը խնդիրներ է արձանագրել օբյեկտիվ գնահատման հետ կապված,
- նույն տոկոսային հարաբերությամբ ուսանողները խնդիր են արձանագրել նաև իրենց կարիքների հաշվառման հետ կապված,
- խնդիրենը կան նյութերի մատչելիության, դասավանդման մեթոդների ընտրության հետ կապված և այլն:

6. Ֆակուլտետը մասնակցել է ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից կազմակերպված «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցմանը, որի արդյունքների վերլուծվել և ներկայացվել են վարչություն: Հարկ է նշել, որ ուսանողների կողմից լրացված հարցաթերթիկները մեխանիկական բնույթ են կրում: Նրանք դեռևս չեն գիտակցում այդ հարցումների կարևորությունը, չեն գիտակցում նաև իրենց դերը բուհում մանկավարժական գործընթացի բարելավման ուղղությամբ: Առաջարկություն է արվել մեր կողմից, որ այդ աշխատանքների շուրջ անհրաժեշտ է իրականացնել զրոյցներ, քննարկումներ ուսանողների շրջանում, նրանց

նախապատրաստել նմանատիպ աշխատանքների կատարմանը:

7. Ամբիոնների կողմից մշակվել են դասընթացի ինքնուրույն աշխատանքների փաթեթ, դրանց արդյունքները հաշվի են առնվում դասընթացի արդյունքները վերլուծելու ընթացքում: Սակայն պետք է շեշտենք, որ ուսանողների ինքնուրույն աշխատանքի կարողությունների ձևավորմանը պատշաճ ուշադրություն և ջանքեր չեն գործադրվում: Մենք այս ուղղությամբ դեռևս աշխատանքներ ունենք կատարելու:

8. Մշակվել են գնահատման ռուբրիկներ տարբեր առարկաների համար:

9. Աշխատանքներ են իրականացվում ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորման ուղղությամբ: Սակայն դրանք բավարար չեն: Ուսանողների շրջանում իրականացված հարցումները ևս փաստում են, որ դա մեր թույլ կողմն է: Մագիստրոսական կրթական ծրագրում դասավանդվում է <<Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն>> առարկան, որը նպաստում է այդ կարողությունների ձևավորմանը: Բացի դրանից մագիստրոսական կրթական ծրագրի հետազոտական բաղադրիչները բավականին մեծ կրեդիտներով են ներկայացված ուսումնական պլաններում: Բայց միևնույն է՝ այս գործողությունները չեն լրացում այն բացը, որ մենք ունենք այս ոլորտում: Ավելի լուրջ է իրավիճակը բակալավրիատում, որի ուսումնական պլաններում նմանատիպ առարկա նախատեսված չէ: Որպեսզի նպաստենք ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորմանը, առաջարկել ենք բակալավրիատում ռեֆերատների և կուրսային աշխատանքների մեջ որպես պարտադիր պայման ներառել հետազոտական աշխատանք: Բացի դրանից, դասավանդվող առարկաների առաջադրանքները ևս հետազոտական բնույթի պետք է լինեն:

Ֆակուլտետի նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնը հաշվետու տարում համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնել «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» հեռակա ուսուցման համակարգով կրթական նոր ծրագրի մասնագիրն ու ուսումնական պլանը (*Տես՝ ֆակուլտետի խորհրդի 2022թ: մարտի 22-ի նիստի թիվ 10 արձանագրությունը*): Նոր 2022-2023 ուսումնական տարում արդեն կատարվել է ընդունելություն (ընդունվել է 19 ուսանող, նախատեսված 20 տեղի համար), ուսանողները հիմնականում գործող դաստիարակներ են, ովքեր համատեղում են աշխատանքը ուսման հետ: (*Տես՝ գիտխորհրդի ապրիլի 29-ի N3-L որոշումը [https://aspu.am/website/images/files/Voroshum\\_Skzbnakan.pdf](https://aspu.am/website/images/files/Voroshum_Skzbnakan.pdf)*)

Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման, առարկայական նկարագրերի վերափոխմանը նվիրված սեմինարների ընթացքում քննարկվել են գնահատման բաղադրիչներն ու մեթոդները: 2022-2023 ուսումնական տարում առարկայական նկարագրերի վերափոխումների ընթացքում վերանայվել են նաև գնահատման բաղադրիչներն ու մեթոդները, դրանք համապատասխանեցվել են

առարկաների վերջնարդյունքներին: Գնահատման բաղադրիչների փոփոխություններն ու բարելավումներն իրականացվում են ՀՊՄՀ-ի ուսանողների գնահատման համակարգի արդյունավետության գնահատման և բարելավման կարգի համաձայն: (Տես՝ [https://aspu.am/website/images/files/us\\_%20gnahatman%20hamakargi%20ardyunavetutyuan%20barelavman%20karg.pdf](https://aspu.am/website/images/files/us_%20gnahatman%20hamakargi%20ardyunavetutyuan%20barelavman%20karg.pdf))

Գնահատման համակարգի, բաղադրիչների, չափանիշների հարցերը քննարկվում են ինչպես ամբիոնների նիստերի, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի նիստերում: Ամբիոնների որակի պատասխանատուները հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպել են ՀՊՄՀ-ի կողմից ընդունված գնահատման կանոնակարգի մանրակրկիտ ուսումնասիրություն և քննարկում:

Առավել ևս այս խնդիրը կարևորվում է մագիստրատուրայում ուսումնական պլանով նախատեսված հետազոտական բաղադրիչի գնահատման արդյունավետության բարձրացման համար: Այդ նպատակով դեռևս 2019-20 ուսումնական տարվանից վերանայվել և կիրառության մեջ են դրվել մագիստրոսների աշխատանքային պլանները, որոնք հստակեցնում են նաև գնահատման բազմագործոն բաղադրիչները և դրանց համար նախատեսված կշիռները. մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան մշակվել է դասընթացների համար տարբերակված գնահատման ձևեր(*Տես՝ «Մագիստրոսի աշխատանքային պլան»-ը*):

Նկատի ունենալով ընթացիկ գնահատման մեթոդաբանությունը՝ ինչը ենթադրում է ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, ուսանողի ակտիվությունը և ուսումնական գործունեության գնահատումը միջանկյալ գնահատականների միջև ընկած ժամանակահատվածում, ֆակուլտետն առաջարկել է նաև ընթացիկ գնահատման ձևին տրվող թվային, բալային տարբերակից անցնել խոսքային տարբերակի՝ ստուգված-չստուգված:

Գրագործության դեմ պայքարի նպատակով մագիստրատուրայում սովորող ուսանողները յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնում են հաշվետվություն կատարած աշխատանքների մասին: Հաշվետվություններն իրականացվում են ֆակուլտետի կողմից մշակված «Մագիստրոսի մագիստրոսական թեզի կատարման աշխատանքային պլան»-ի համաձայն (*Տես՝ փաստաթուղթը*)

Յուրաքանչյուր կիսամյակի համար աշխատանքային պլանում մշակված է բովանդակություն, ինչպես նաև գնահատման ձևեր, որոնց համապատասխան սովորողը պետք է իրականացնի աշխատանքներ: Պարտադիր պայման է՝ քննարկել կիսամյակային հաշվետվությունները համակուրսեցիների հետ, լսարանում: Խմբային քննարկումների պարագայում գնահատման բալը բարձրանում է:

Նույն աշխատանքները կազմակերպվում են բակալավրիատում ռեֆերատների, կուրսային աշխատանքների, ավարտական աշխատանքների շուրջ աշխատելիս: Ամբիոնների կողմից մշակվել են ռեֆերատների, կուրսային աշխատանքների ուղեցույցեր, որոնց մեջ նշված է հստակ պահանջ՝ հետևել գրականության հղման կանոնների պահպանումը:(*Տես ուղեցույցերը*)

Գրագործության բացառմանը նպաստում են նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը: Թեմաների բազան յուրաքանչյուր ուսումնական տարի փոփոխության է ենթարկվում, կրկնվող թեմաներ չեն ներառվում բազայում, ինչը ստիպում է

ուսանողին ինքնուրույն հետազոտություն կատարել: Գրագողության հետ պայքարը ֆակուլտետի ամբիոնների ուշադրության կենտրոնում է: Այս հարցին նվիրված հատուկ ամբիոնային նիստեր են կազմակերպվում, թեմաների ձևակերպման և հաստատման հարցը մի քանի անգամ լսվում, որից հետո նոր հաստատվում է ֆակուլտետի խորհրդի նիստում (*Stu' 2021-22 թ. ֆակուլտետի խորհրդի նիստերի արձանագրությունները*):

Գրագողության և ցիտման նորմերի պահպանման նպատակով մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակներում դասավանդվող «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացի շրջանակներում ուսանողները ծանոթանում են այդ կանոնների պահպանմանը վերաբերող կարգերին և կանոններին, այդ կանոնների համապատասխան գրում են հողվածներ և այլ աշխատանքներ, որոնք քննարկվում են լսարանում:

Ֆակուլտետի ՈւԳ-ի կողմից նախատեսված են սեմինարներ նվիրված գրագողության դեմ պայքարին, գրականության հղման կանոնների պահպանմանը, հողվածներ գրելու պահանջներին և նմանատիպ այլ թեմաներով: Մագիստրոսական թեզերի նախապաշտպանություններին աշխատանքները մանրակրկիտ ուսումնասիրվում են գրագողությունը բացառելու նպատակով: (*Stu' ՈւԳ-ի 2022 թ. աշխատանքային պլանը*)

Խնդրի լիարժեք լուծմանը խանգարում է հակապլագիատային հայալեզու ծրագրի բացակայությունը, որը կօգներ արագ բացահայտել խնդիրը: Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի աշխատանքների պարագայում այդ ծրագրի առկայություն առավել ևս կարևոր է, քանի որ այլ լեզուներով ծրագրերը չեն բացահայտի առկա խնդիրը: Խնդիր է նաև հայալեզու մասնագիտական գրականության, աղբյուրների սակավությունը, ինչպես նաև մեր ուսանողների օտար լեզվի իմացության ոչ բավարար մակարդակը:

Կարծում ենք, գրագողության դեմ պայքարելու գործին կօգնի նաև ավարտական և մագիստրոսական թեզերի տեսական և հետազոտական մասերի համամասնության փոփոխությունը՝ տեսական մասերի էջերի քանակի նվազեցումը հետազոտականի համեմատ:

Դեռևս այս խնդիրը արդիական ենք համարում՝ առկա արդյունավետ մեխանիզմների սակավության պատճառով:

Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:

ՄԿԾ-ների վերանայման ընթացքում ուսումնասիրվել է միջազգային փորձը, կրթական ծրագրերը համեմատվել են այլ երկրների կրթական ծրագրերի հետ. Ֆինլանդիայի Օուլու համալսարան, Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան մանկավարժական համալսարան, Մինսկի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարան: Ուսումնական պլաններում ներառված առարկաները համապատասխանեցվել են տարբեր երկրներում նույն ծրագիրն իրականացնող ուսումնական հաստատությունների պլաններին:

Դրա շնորհիվ ֆակուլտետը կարողանում է իրականացնել՝

● ուսանողների փոխանակում Ֆինլանդիայի Օուլու համալսարանի հետ (Erasmus Plus կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում 2022 ուստարում 2 ուսանող ):

Որպես կանոն ֆակուլտետի դասախոսները յուրաքանչյուր տարի ակտիվ մասնակցում են տարաբնույթ վերապատրաստման դասընթացների, միջազգային վեբինարների:

Միջազգային գործընկերների հետ կապերը հիմնականում ապահովում ենք գիտաժողովներին մասնակցելով, վեբինարներ կազմակերպելով:

Ֆակուլտետը մշակել է նաև միջազգայնացման տեսլականը, որը կնպաստի միջազգային կապերի հարստացմանն ու այդ բնագավառում աշխատանքների համակարգմանը: Այն է.

Սկզբնական կրթության ֆակուլտետի միջազգայնացման տեսլականն է մինչև 2025 թվականը մշակել և իրականացնել միջազգային կրթական ծրագիր, նպաստել դասախոսների գիտական միջազգային վերապատրաստումների կազմակերպմանը, կրթության որակի ապահովման ընթացքում կիրառել որակի միջազգային չափանիշներ, հնարավորինս ապահովել դասախոսական անձնակազմի երկու լեզվով դասավանդելու համար անհրաժեշտ պայմաններ, կազմակերպել վեբինարներ և սեմինարներ առաջատար միջազգային գործընկեր-բուհերի հետ, նպաստել ֆակուլտետում իրականացվող հետազոտությունների արդյունքների և փորձի տարածմանը:

Նոյեմբերի 17-22 –ը ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության գծով փոխդեկան Լուսինե Պողոսյանը «Մեդիագրագիտություն մեծահասակների համար 2.0» ծրագրի շրջանակներում իրականացրել է այս Գերմանիա: Այցի նպատակն էր մեդիագրագիտության, քննադատական մտածողության, ապատեղեկատվության հետ տարվող աշխատանքների գերմանական փորձի ուսումնասիրումը: Այցի շրջանակներում կատարված աշխատանքների բովանդակությունը կկազմակերպվեն սեմինարներ դասախոսների և ուսանողների համար:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:		
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:		
Բակալավրի	առկա	302
	հեռակա	317
Մագիստրոսի	առկա	70
	հեռակա	119
Ընդհանուր ուսանողների թիվը		808

Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով			
Ուսանողների արտահոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1		0	
Ուսանողների ներհոսք			
Հաստատություն/երկիր		16 ուսանող	
1	Երևանի պետական ինդուստրիալ-մանկավարժական տեխնիկում	1	
2	Երևանի բժշկական թիվ 2 ուսումնարան	1	
3	Սևանի բազմագործառնության պետական քոլեջ	1	
4	Արարատի պետական քոլեջ	3	
5	Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ	2	
6	Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ	1	
7	Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ	1	
8	Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ	1	
9	Երևանի պետական հումանիտար քոլեջ	2	
10	Մարտունու պետական քոլեջ	1	
11	Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր պետական քոլեջ	1	
12	Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ	1	
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	1,24%	10
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	1,36%	11
3	Իր դիմումի համաձայն ազատված և հետագայում վերականգնման նպատակ ունեցող ուսանողների տոկոսը/ թիվը	4,33%	35

**Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:**

Ինչպես գիտեք, վերլուծելով նախորդ մի քանի տարիների սկզբնական կրթության ֆակուլտետ դիմող ուսանողների թիվը և սահմանված տեղերի հարաբերակցությունը ուսուցման առկա և հեռակա համակարգերում՝ ֆակուլտետը 2021- 2022 ուսումնական տարվա համար հանդես եկավ առաջարկությամբ՝ ավելացնել առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի դիմորդների համար հատկացվող տեղերի քանակը: Համապատասխանաբար 62 տեղի փոխարեն հատկացվեց 100 տեղ, դիմել էին 102-ը, 20 տեղի փոխարեն հատկացվեց 25 տեղ, դիմել էին 33-ը:

Սակայն 2022-23 ուսումնական տարվա համար հատկացվող տեղերի և դիմորդների հարաբերակցությունն այնքան էլ գոհացուցիչ չէ՝

1. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագիր՝ սահմանված 100 տեղի համար դիմել են 77 դիմորդ,
2. «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագիր՝ սահմանված 25 տեղի համար դիմել են 18 դիմորդ:

Սահմանված տեղերն այս տարի չեն լրացվել մի շարք օբյեկտիվ պատճառներով պայմանավորված.

- ընդունելության քննությունների կարգում հընթացս փոփոխություն կատարելը՝ 2 պարտադիր քննություն,
- սկզբնական կրթության ֆակուլտետի մասնագիտությունների համար սահմանված համեմատաբար բարձր ուսման վարձը,
- սկզբնական կրթության ֆակուլտետում սովորել նախընտրող պոտենցիալ դիմողների սոցիալական ցածր վիճակը,
- մանկավարժի ցածր վարկանիշը հասարակության մեջ, մանկապարտեզների և տարրական դպրոցի մանկավարժների ցածր աշխատավարձերը և այլն:

Սրան զուգահեռ հատկապես վերջին երկու տարում նվազել է հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով (հեռակա) դիմողների թիվը (սոցիալական խնդիրներ, ցածր վճարունակություն, այլ բուհերում համանման մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրի բացում ավելի ցածր ուսման վարձավճարով, այլ պատճառներ): Ինչը խոսում է այն մասին, որ այստեղ մենք աշխատանքի մեծ դաշտ ունենք:

Այդուհանդերձ մեր առաջնահերթ խնդիրը շարունակում է մնալ մոտիվացված և բարձր առաջադիմությամբ դիմորդներին սկզբնական կրթության ֆակուլտետ ուղղորդելը:

2022 թ. մասնագիտական կողմնորոշման աշխատանքային խումբն աշխատել է առցանց և առերես ձևերի համակցմամբ. առաջին կիսամյակում, համավարակով պայմանավորված, առավելապես ակտիվ են եղել աշխատանքներն առցանց տիրույթում (դրանք իհարկե շարունակվել են նաև երկրորդ կիսամյակում), իսկ ահա երկրորդ կիսամյակում կազմակերպվել են նաև փոխադարձ այցելություններ և առերես հանդիպումներ:

Ֆակուլտետի մասնագիտական կողմնորոշման աշխատանքային խումբն աշխատել է հետևյալ ուղղություններով.

**Աշխատանքներ առցանց տիրույթում.** ՀՊՄՀ-ն, սկզբնական կրթության ֆակուլտետն ու նրա մասնագիտությունները գովազդելու նպատակով պարբերաբար աշխատանքներ են տարվում առցանց տարածքում՝ հատկապես ֆակուլտետի Facebook-յան էջում: Ֆակուլտետի ֆեյսբուքյան էջում թարմացվել և տեղադրվել են ֆակուլտետին և ֆակուլտետի մասնագիտություններին վերաբերող բոլոր անհրաժեշտ նյութերը՝ բուկլետներ, փաստաթղթեր, ընդունելության կարգեր, լավագույն պատմություններ, ուսանողների տեսաուղերձներ, սահիկաշարեր «Հաջողության բանաձև» հաղորդաշարի՝ սկզբնական կրթության ֆակուլտետին վերաբերող բոլոր հաղորդումները, հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի նոր կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը: 2022 թվականի հունվարից ֆակուլտետի ֆեյսբուքյան էջում տեղադրվել է դիմորդներն հյուընկալելու նպատակով «բաց դռների» վերաբերյալ հայտարարությունը: Այս ընթացքում ֆեյսբուքյան մեր գործընկերների թիվը հասել է 2888-ի՝ մանկապարտեզներ, դպրոցներ, կրթահամալիրներ, հասարակական կազմակերպություններ, ուսուցիչներ և այլք: (Տես՝ ֆակուլտետի ֆեյսբուքյան էջը):

Առցանց տիրույթում ֆակուլտետի ամբիոնների դասախոսների կողմից մանկավարժների և և ծնողների համար կազմակերպվող սեմինարների և պարապմունքների ընթացքում ևս մանրամասն տեղեկատվություն է տրամադրվել ֆակուլտետի և մասնագիտությունների վերաբերյալ, ինչպես նաև՝ ՀՊՄՀ ռադիո «Ֆամայով» հեռարձակվող «Ծնողական կրթություն» հաղորդաշարի համատեքստում: Այդ աշխատանքների արդյունքում գրանցվել են 18 հավանական դիմորդ:

Հայտարարվել և գործել են բաց դռների օրեր ֆակուլտետում: Այդ օրերին ֆակուլտետ են այցելել նաև միջին մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողները՝

- հունվարի 27-ին Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի քոլեջի այս տարվա շրջանավարտները՝ 9-ը կողմնորոշված ուսանող,
- փետրվարի 2-ին Արարատի պետական քոլեջի շրջանավարտները՝ 7 կողմնորոշված ուսանող,
- ապրիլի 19-ին Երևանի հումանիտար քոլեջի 3 շրջանավարտ (19 հավանական դիմորդ):

Նրանց համար իրականացվել է հագեցած ծրագիր, մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ սեմինար պարապմունք և թեստավորում, շրջայց՝ ամբիոններ, ՀՊՄՀ թանգարան, գրադարան, ռադիո: (Տես՝ հանդիպումների օրակարգեր, ներկայաթերթիկներ, տեղեկատվական հարթակում և Facebook-յան հարթակում տեղադրված նյութեր, նկարներ):

**Այցելություններ դպրոցներ.** Սկզբնական կրթության ֆակուլտետի՝ համալսարանը

ներկայացնող և դիմորդների մասնագիտական կողմնորոշման հարցերով զբաղվող աշխատանքային խումբը այցելություններ է նախաձեռնել Երևանի և ՀՀ մարզերի միջնակարգ և ավագ դպրոցներ: Կազմվել է այցերի գրաֆիկ և այդ գրաֆիկի համաձայն ֆակուլտետի աշխատանքային խումբը հանդիպումներ է ունեցել աշակերտների հետ. սկզբնական կրթության ֆակուլտետ կողմնորոշված 13 դիմորդ:

**Անհատական կողմնորոշիչ աշխատանքներ** դեկանատի աշխատակիցների և ֆակուլտետի ամբիոնների դասախոսների կողմից՝ 15 հավանական դիմորդ:

**Անմիջական և պարբերական աշխատանք առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի կրթական ծրագրերի ուսանողների հետ՝ ուսումնառությունը մագիստրատուրայում շարունակելու ուղղությամբ:** Այստեղ դժվարությունն այն է, որ ավարտական կուրսերի համար դեռևս գործում են ավելի ցածր ուսման վարձեր, իսկ այս ուսումնական տարի ընդունվելիս նրանք պիտի վճարեն ավելի բարձր վարձավճարներ, մոտավորապես 100-120 հազար դրամի տարբերությամբ: Նախնական տվյալներով առկա և հեռակա ուսուցման ձևերում ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրերում իրենց կրթությունը ցանկացել են շարունակել բակալավրի կրթական ծրագրերի ուսանողների 1/3-րդը: Սակայն սրանք նախնական տվյալներ են: Անվճար տեղերի համար դիմել են՝

- «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մկծ 5 շրջանավարտ 4 տեղի համար,
- «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մկծ՝ 13 շրջանավարտ 9 տեղի համար:

Դիմորդների հետ աշխատանքները շարունակական են:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները:

Հեռացում.

1. ուսման անբավարար առաջադիմություն,
2. ուսման վարձի պարտք:

Վերականգնում.

1. կրթությունը շարունակելու և բարձրագույն կրթություն ստանալու ցանկություն,
2. աշխատաշուկայում պահանջված մասնագիտությամբ աշխատանք ունենալու հեռանկար,
3. համալսարանում անհրաժեշտ մեխանիզմների առկայություն վերականգնվելու համար:

Հաշտուու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:

Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:

Բակալավր

-

Մագիստրոս		-
Ընդհանուր		-
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1		-
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1	«Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր/օնլայն ժողովածու/	30

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

<p>Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:</p>
<p>Ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում աշխատում են համապատասխան որակավորում ունեցող դասախոսներ.</p> <ul style="list-style-type: none"> <li>● 1 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,</li> <li>● 6 գիտությունների դոկտոր, պրոֆեսոր</li> <li>● 1 գիտությունների թեկնածու, պրոֆեսոր</li> <li>● 1 գիտությունների թեկնածու, պրոֆեսոր պ/պ</li> <li>● 24 գիտությունների թեկնածու, դոցենտ</li> <li>● 6 ասիստենտ</li> <li>● 9 դասախոս</li> <li>● 1 գիտությունների թեկնածու, ասիստենտ</li> <li>● 1 դոցենտ</li> <li>● 3 գիտությունների թեկնածու, դասախոս: /Տե՛ս ամբիոնների բաշխման գրությունները/:</li> </ul> <p>Ամբիոններում աշխատանքներ են իրականացվում դասախոսների մասնագիտական գիտական</p>

ներուժը կատարելագործելու ուղղությամբ: Ամբիոններում կազմակերպվում են սեմինարներ, որոնց ընթացքում քննարկվում են ժամանակակից գիտության նվաճումները, նորարարությունները, տվյալ բնագավառի հետազոտության արդյունքները /Տե՛ս ամբիոնների նիստերի արձանագրություններ/, ամբիոնային նիստերում քննարկվում են նաև փոխադարձ դասալսումների արդյունքները:

Դասախոսների կատարած աշխատանքների արդյունավետությունը և համապատասխանությունը համալսարանի և ֆակուլտետի ռազմավարական ծրագրի հիմնական ուղղություններին քննարկում է ինչպես ամբիոնների նիստերի, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի նիստերում: Հիմնական հարցը, որը շատ հաճախ շոշափվում է՝ դասավանդման մեթոդների, առարկայական վերջնարդյունքների, գնահատման ձևերի համապատասխանեցման հարցն է, որն արդյունավետ և որակյալ կրթության ապահովման գրավականն է:

Ֆակուլտետի դասախոսներն ընդգրկված են ուսուցիչների ատետասվորման նպատակով կազմակերպված վերապատրաստման դասընթացներին որպես վերապատրաստողներ:

Ամբիոններում աշխատանքներն են իրականացվում դասախոսների մասնագիտական կատարելագործման նպատակով: Այդ աշխատանքներն են .

- ներամբիոնային սեմինարները և գիտական լսումները, ֆակուլտետային սեմինարները, վեբինարները (Տես՝ ՀՊՄՀ Google docs-ում տեղադրված ամբիոնային սեմինարների ժամանակացույցերը. մանկավարժական պրակտիկաների , դասընթացների նկարագրերի և բովանդակության բարելավում ...),
- Համագործակցող համալսարանների մասնագետների կողմից դասախոսների համար դասախոսություններն ու վարպետած դասերը,
- պարբերաբար իրականացվող դասալսումները, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում,
- ֆակուլտետի ՈՒԳ-ի կողմից կազմակերպված սեմինարները, որին մասնակցում են ոչ միայն ուսանողները, այլ նաև դասախոսները,
- Մանկավարժական պրակտիկաների բարելավմանն ուղղված սեմինարների կազմակերպումը, որոնց մասնակցում են ուսանողներ, մեթոդնիստներ, դասախոսներ,
- Համալսարանի կողմից կազմակերպվող վերապատրաստումներ,
- Ներֆակուլտետային սեմինարները՝ նոր մասնագրերի և առարկայական նկարագրերի բովանդակության և կառուցվածքի, ՀՊՄՀ-ի կողմից ընդունված կանոնադրագրերի վերաբերյալ:

Ըստ ամբիոնների ներկայացված հաշվետվությունների հաշվետու ժամանակահատվածում դասախոսական անձնակազմն իրականացրել է իր առջև դրված խնդիրները, նպաստելով գիտամեթոդական, գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

Դասախոսներին հետաքրքրող տարաբնույթ տեսական և մեթոդական հարցերի շուրջ կազմակերպվել են ամբիոնային գիտամեթոդական սեմինարներ: Կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչի բարելավման ուղղությամբ ծանոթացում հետազոտական մեթոդների, հետազոտությունների

կազմակերպման ընթացքի, հետազոտության տեսակների միջազգային փորձի հետ:

## VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հաշվետու ժամանակահատվածում սկզբնական կրթության ֆակուլտետի 3 ամբիոններն աշխատել են հետևյալ հետազոտական ոլորտների ուղղությամբ.

### ***Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն***

- «Տարրական դպրոցի ապագա ուսուցիչների լեզվակարողությունների և գրագիտության զարգացման, մանկավարժական պրակտիկանների բովանդակության ու ձևերի արդիականացման հիմնախնդիրները»,
- «Տարրական դպրոցում մայրենիի ուսումնասիրման գործընթացի արդյունավետության բարձրացումը ծրագիր, դասագիրք և ուսումնաօժանդակ գրականության շրջանակներում»,
- «Ժամանակակից «Հայոց լեզու» և «Մայրենիի ուսուցման մեթոդիկա» բուհական դասընթացների արդիականացում ուսանողակենտրոն մանկավարժական կրթության բուհական համատեքստում»

Նշված ուղղություններով մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը տպագրել է 2 ձեռնարկ, 3 դասագիրք և 8 հոդված, որից մեկը ՌԴ-ում:

### ***Մաթեմատիկայի և փարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոն***

- «Կրթական գործընթացում մեթոդամաթեմատիկական կոմպետենտությունների ձևավորում-զարգացում»,
- ««Մաթեմատիկա» դասընթացի պրոյեկտման մեթոդաբանական և տեսական հիմունքներ»,
- «Կրտսեր դպրոցականի կոգնիտիվ, անձնային և խոսքային-տրամաբանական զարգացման հիմնախնդիրը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում՝ կրթության համագործակցության համատեքստում»,
- «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության շրջանավարտի ստոխաստիկական կոմպետենտության զարգացման գիտատեսական և գործնական հիմունքները:
- «Կրտսեր դպրոցականի տեղեկատվական մշակույթի զարգացման հիմնախնդիրը՝ կրթության հաղորդայնության համատեքստում»,

- «ԿԱՊԿՈՒ սովորողներին մաթեմատիկա ուսուցանելու հոգեբանամանկավարժական հիմունքները»,

- «Մաթեմատիկայի տարրական դասարանների չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի համեմատական վերլուծություն (միջազգային փորձի ուսումնասիրում)»:

Նշված ուղղություններով մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնը ղեկավարել է 5 մագիստրոսական թեզ, 4 ավարտական աշխատանք: Ամբիոնի դասախոսներն ընդգրկված են նոր չափորոշիչների և ծրագրերի մշակման «Մաթեմատիկա» առարկայական խմբի տարրական կրթության փորձագիտական աշխատանքներում: Կատարված հետազոտական աշխատանքների նյութերը ներառվել են տարբեր դասընթացների ուսումնական նյութերում:

Տպագրվել է աշխատանքային տետր և մեթոդական ուղեցույց «ԿԱՊԿՈՒ սովորողներին մաթեմատիկա ուսուցանելու հոգեբանամանկավարժական հիմունքները» ուղղության շրջանակներում:

ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովին նշված ուղղություններով ամբիոնի դասախոսների կողմից ներկայացվել է 5 զեկույց:

***Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հեղազոտական ոլորտների ուղղությունները.***

- «Նախադպրոցական կրթության արդի վիճակի և զարգացման հեռանկարների գիտական հետազոտումը»,
- «Գիտություն-պրակտիկա կապի ամրապնդումը»
- «Նախադպրոցական կրթության առաջանցիկ զարգացումների ուսումնասիրումը, կապված երեխայի
- բազմակողմանի զարգացման և հատկապես, խաղային գործունեության հետ՝ ներագույն խաղային
- տեխնոլոգիաների կիրառման և այս ոլորտում տեղեկատվական բազան հարստացնելու հետ»
- «Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում»
- Նախադպրոցական տարիքի երեխաների մեղիագրագիտության ձևավորման արդի տեխնոլոգիաները և դրանց կիրառման մանկավարժական պայմանները:

Նշված ուղղություններով մշակված նյութերի շուրջ դասախոսները պարբերաբար հրատարակում են գիտական հոդվածներ տարբեր գիտաժողովների ժողովածուներում և գիտական ամսագրերում:

Նախադպրոցական մանկավարժության և ամբիոնն իր գիտահետազոտական աշխատանքների շրջանակում 2022-2023 ուս.տարում շարունակել է ընդգրկել «Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում» խորագրով ուղղությունը, որը ՖԻԴԵ-ի և Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի հետ համագործակցության արդյունք է: 2022 թվականի ապրիլ ամսին համագործակցության արդյունքում կազմակերպվել էր պետական մանկապարտեզների դաստիարակիների առցանց վերապատրաստում. 18 դաստիարակ:

2022 թվականի նոյեմբերի 22-ին ՇԳԻ տնօրեն Ս.Լպուտյանի պայմանավորվածությամբ հանդիպում է կազմակերպվել ամբիոնի դասախոսական կազմի և Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետ՝ Մ.Խաչատրյանի հետ, քննարկվել են շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներդնելու նպատակահարմարության հարցը, նախնական պայմանավորվածությամբ որոշվել է պետական նախակրթարաններում փորձ անել ներդնել շախմատային նախագիտելիքները:

Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Научный журнал «Интернаука»	РИНЦ	1
2	Евразийский союз ученых.	РИНЦ	1

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	International Journal Scientia Pedagogical Experimentalis (SPE)	WOS	1
2	WISDOM 3(23), 2022 Khachatur Abovyan Armenian State Pedagogical University	SCOPUS	1
3	Main issues of pedagogy and psychology Scientific Periodical		1
4	Sciences of Europe Praha	РИНЦ	1

ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Գիտական	РИНЦ	1

	տեղեկագիր		
2	Сборник научных статей	BAK	1

**Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում:**

Ֆակուլտետի մշակած միջազգայնացման տեսլականում առանձնացված է որպես առանձին ուղղություն միջազգային գործընկերների հետ հետազոտությունների կազմակերպումն ու իրականացումը, միջմշակութային հետազոտությունների արդյունքների վերլուծությունը, դրանց հիման վրա հաշվետվությունների, գիտաժողովների կազմակերպումը:

Բացի դրանից համագործագող բուհերի դասախոսների հետ կատարված հետազոտությունների շրջանակներում տպագրվում են հոդվածներ բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում (*Stu'ամբիոնների արձանագրությունները կատարած հետազոտությունների, տպագրված հոդվածների մասին*):

Այս ոլորտում գրանցված արդյունքները գերազանց համարել չենք կարող: Ամբիոնների հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ դեռևս անելիքներ կան, դրանք նաև նշված են ֆակուլտետի միջազգայնացման տեսլականում: Մինչև 2025 թվականը պլանավորում ենք գտնել գործընկերներ և հզորացնել այդ ուղղությամբ աշխատանքները:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

**Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ):**

Կրթական ծրագրերի բարելավումն ու վերափոխումը իրականացվում է հիմնականում կատարված հետազոտությունների հիման վրա: Ամբիոնների հետազոտական ուղղությունների շուրջ կատարված աշխատանքների հիման վրա ստեղծվում են ուսումնական նյութեր, որոնք կամ հարստացնում են տարբեր առարկաների մոդուլները, կամ մշակվում են ընտրովի դասընթացներ, որոնք նպաստում են կրթական ծրագրի վերջնարդյունքների ձևավորմանը ուսանողների շրջանում: Տարբեր ուղղություններով կատարված հետազոտությունները հարստացնում են ոչ միայն առարկաների բովանդակությունը, այլ նաև նպաստում ուսումնական հաստատությունների համար ժամանակի պահանջներին համահունչ ուսուցիչների և դաստիարակների պատրաստմանը :

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչի բարելավման նպատակով իրականացվել է մի քանի առաջատար բուհերի կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչների ուսումնասիրություն և համեմատություն: Հաշվի առնելով Ֆինլանդիայի առաջընթացը սկզբնական կրթության զարգացման

ոլորտում ուսումնասիրվել են Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի ՄԿԾ-ները: Նշված համալսարանի հետ համագործակցության շրջանակներում բարելավվել են ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի <<Տարրական մանկավարժություն և մեթոդիկա>> ԲԿ և ՄԿ ծրագրերը: Բրիտանական, Շոտլանդական, Ամերիկյան մի շարք համալսարանների փորձն ուսումնասիրելու ընթացքում դուրս է բերվել հետազոտական աշխատանքների իրականացման բովանդակային և կազմակերպական մի շարք հարցեր, որոնք հաշվի են առնվել ֆակուլտետում նույն ուղղությամբ տարվող աշխատանքները պլանավորելիս և կազմակերպելիս: Բենչմարքինգի արդյունքում կատարվել են առաջարկություններ և փոփոխություններ առարկայական նկարագրերում, առարկաների վերջնարդյունքներում:

Ներկայացվել է առաջարկությունների փաթեթ, որը կօգնի բարելավել հետազոտական աշխատանքների բովանդակությունն ու արդյունքները ՄԿԾ-ում.

1. ՄԿԾ-ում դասավանդվող բոլոր առարկաների մեկ միջանկյալը դարձնել հետազոտական բնյութի և ծառայեցնել մագիստրոսական թեզի հետազոտական աշխատանքին /արդեն իրականացվում է /:
2. Որպես միջանկյալ ստուգման հետազոտական-ստեղծագործական ձևեր կարող են հանդես գալ նախագծային աշխատանքները, իրավիճակների վերլուծությունները, զրույցների և հարցումների իրականացումը և դրանց վերլուծությունն առարկայի համատեքստում/արդեն իրականացվում է /:
3. Աշխատանքները կազմակերպելու ընթացքում հենվել մուլտիմեդիոն լսարանների նյութատեխնիկական բազայի վրա, օգտագործել այդ լսարանների հնարավորությունները սեմինարներ, քննարկումներ հետազոտական աշխատանքի արդյունքները ներկայացնելու և վերլուծելու նպատակով /արդեն իրականացվում է /:
4. Ծրագրի շրջանակներում ստեղծված նյութերը որպես մոդուլներ ներառել տարբեր առարկաների մեջ, դրանք դարձնելով հասանելի բոլորի համար/ընթացքում է/:

Կատարված աշխատանքների արդյունքում մշակվել են մագիստրոսի աշխատանքային պլան, գնահատման չափանիշներ, դրանք դրվել են կիրառության մեջ:

Առաջարկությունները քննարկվել են Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստում և արժանացել հավանության:

**Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ.**

1. Ուսանողների հետազոտական աշխատանքներին և դրանց արդյունքներին նվիրված ամենամյա ուսանողական գիտաժողովի կազմակերպում:
2. Հոդվածների հրատարակում ուսանողների կողմից:
3. Դասախոս-ուսանող գիտական հոդվածների համատեղ հրապարակումներ. այս պահանջը ներառված է նաև մագիստրոսի աշխատանքային պլանում:
4. Ուսումնասիրություններ մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկաների

ընթացքում մանկավարժական պրակտիկայի բազա հանդիսացող կրթական հաստատություններում. այդ պահանջի ներառումը մանկավարժական պրակտիկայի առարկայական նկարագրերում: Հետազոտությունների, հատկապես case study, ներկայացումն ու գնահատումը ուսանողների թղթապանակների պաշտպանության ժամանակ:

5. Աշխատող ուսանողների կողմից ուսումնասիրությունների իրականացում իրենց կրթական հաստատություններում և դրանց ներկայացում ֆակուլտետային սեմինարների ժամանակ, մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտություններին ուղղված համապատասխան դասընթացների ժամերին:

Արդյունքում՝ ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացում, ինչպես նաև բարելավված մագիստրոսական և ավարտական աշխատանքներ, մանկավարժական պրակտիկայի թղթապանակներ:

Հաշվետու տարում ուսումնասիրվել են և ամբիոնի վարիչների հետ քննարկվել նշված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների արդիականությունն ու մասնագիտական առնչությունները կրթական հաստատությունների խնդիրներին և գործառույթներին: Քննարկվել են նախորդ ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքներն ու նախագահների հաշվետվությունները: Բացահայտվել են առկա խնդիրները, մշակվել դրանց լուծմանը նպաստող համապատասխան մոտեցումներ: Լրամշակվել և հաստատվել են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները: Թեմաների բանկը հարստացվել է, արդիական և կիրառական արժեք ներկայացնող վերնագրերով: Բավականին ավելացել են մեդիակրթության ոլորտին առնչվող թեմաներն ու աշխատանքները: Առավել կազմակերպված և արդյունավետ են դարձել շրջանավարտների հետ իրականացվող քննարկումները, խորհրդատվություններն ու նախապաշտպանությունները: Սակայն դեռևս բավարար մակարդակով չեն իրականացվում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ուղղությամբ փորձարարական աշխատանքները, արտաքին գրախոսությունների արժանահավատությունը: Վերջիններում հիմնականում նշվում են ընդհանուր դիտողություններ և ոչ արժեքավոր, կառուցողական առաջարկություններ: Հիմք ընդունելով այս ուղղությամբ ֆակուլտետի երեք ամբիոնների կատարած ուսումնասիրությունների արդյունքերը՝ ամբիոնների վարիչների հետ քննարկվել են և ձևավորվել մի շարք մոտեցումներ ու առաջարկություններ:

Ֆակուլտետի ռազմավարության գործողությունների պլանի համաձայն ֆակուլտետում աշխատանքներն են իրականացվում նաև համալսարանի առաքելությունից բխող գիտական ուղղությունների զարգացման ուղղությամբ /մանկավարժություն, մեթոդիկաներ/: Այս երկու ուղղությունները ֆակուլտետի ուշադրության կենտրոնում են: ԲԿԾ-ի ավարտական աշխատանքների և ՄԿԾ-ի թեզերի թեմաները ունեն նեղ մանկավարժական և հետազոտական բնույթ, ուղղված են տարբեր մանկավարժական հիմնախնդիրների, մասնավոր մեթոդիկաների քեյսերի ուսումնասիրությանն ու արդյունքների վերլուծությանը:

## VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

**Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:**

Ֆակուլտետն իր գործունեությունը ծավալում է հիմնականում ՀՊՄՀ՝ Խանջյան 5 հասցեում տեղակայված բարձրահարկ մասնաշենքում: Ֆակուլտետը լսարանային ֆոնդն օգտագործում է՝ համագործակցելով մյուս ֆակուլտետների հետ: Գրեթե բոլոր լսարանները հագեցած են անհրաժեշտ սարքավորումներով, գործում է Wi-Fi կապ, իրենց հնարավորությունների ողջ ներուժով օգտագործվում են ֆակուլտետի մուլտիմեդիոն լաբորատորիան և 2 մուլտիմեդիոն լսարանները:

Ֆակուլտետի տրամադրության տակ գտնվող լսարաններն ապահովված են անհրաժեշտ տեխնիկայով, առկա է SCS-ով հագեցած 6 լսարան, ինչպես նաև խաղերի կենտրոն, 2 մուլտիմեդիոն լսարաններ, 1 մուլտիմեդիոն լաբորատորիա բոլոր անհրաժեշտ սարքավորումներով: 2019 թվականից մուլտիմեդիոն լաբորատորիան և լսարանները ապահովվել են ծրագրերով, որոնք հնարավորություն են տվել ստեղծել էլեկտրոնային innostud.am մուլտիմեդիոն հարթակ: Հարթակի միջոցով ստեղծված վարժությունները թույլ են տալիս իրականացնել վերապատրաստումներ ինչպես դասախոսների, ուսանողների, այնպես էլ ուսուցիչների և դաստիարակների համար: Նշելի է, որ էլեկտրոնային մուլտիմեդիոն հարթակը վերագինման, բարելավման կարիք ունի: Այդ նպատակով ֆակուլտետը դիմել է ռեկտորատիտ՝ գործընթացը կազմակերպելու նպատակով:

Ժամանակ առ ժամանակ խնդիրներ կարող են առաջանալ լսարանային ֆոնդի հետ, պայմանավորված մի շարք օբյեկտիվ պատճառներով: Դրանք են.

• սկզբնական կրթության ֆակուլտետը համալսարանի ամենամեծ ֆակուլտետներից է, որտեղ սովորում են շուրջ 800 ուսանող,

- ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերում, հատկապես <<Տարրական մանկավարժություն և մեթոդիկա>>, նախատեսված առանցքային դասընթացները պահանջում են աշխատանք փոքր խմբերով և հետևաբար մեծ թվով լսարանների կարիք է զգացվում,
- հոսքային դասերի ընթացքում մեծ լսարանների կարիք է լինում, որը լուծելու համար ֆակուլտետը համագործակցում է մյուս ֆակուլտետների հետ:

Ֆակուլտետի լսարանային ֆոնդը հիմնականում ապահովված է տեխնիկայով, սակայն որոշ լսարաններում տեխնիկայի անսարքությունն առաջացնում է լրացուցիչ դժվարություններ:

## VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող

հետադարձ կապի մեխանիզմներ:

Հաշվետու ժամանահատվածում ֆակուլտետի դասախոսներն ու ուսանողները շարունակել են իրենց աջակցությունը պատերազմում տուժած ընտանիքներին և այդ ընտանիքների երեխաներին: Ֆակուլտետի ՊԴԱ-ի դրամական աջակցություն է ցուցաբերել ֆակուլտետի այն ուսանողներին, որոնց ընտանիքի անդամները զոհվել են պատերազմում. մարվել է նրանց ուսման վարձի պարտքերը:

Բարեգործական այցեր են իրականացվել մանկատներ և հատուկ դպրոցներ, հավաքվել են ահրաժեշտ իրեր, պարագաներ, հագուստ, սաների համար կազմակերպել են տոնական միջոցառումներ: Այդ միջոցառումները լուսաբանվել են համալսարանի պաշտոնական կայքում և ֆակուլտետի ֆեյսբուքյան էջում:

Ֆակուլտետի կամավորները մասնագիտական կամավորական գործունեություն են ծավալել կրթական տարբեր հաստատություններում, այդ աշխատանքները լուսաբանված են էլեկտրոնային հարթակում: /Տես՝ ուսանողների կամավորական գործունեության էջ/:

Ֆակուլտետի դասախոսները մասնագիտական աջակցություն են ցուցաբերում հանրապետության տարբեր դպրոցների ուսուցիչներին և դաստիարակներին: Մասնագիտական աջակցությունն իրականացվում է ինչպես առերես /սեմինարների տեսքով/, այնպես էլ հեռավար ձևաչափով: Նմանատիպ քննարկումները հաճախակի բնույթ են կրում:

## IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:

Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:

Ֆակուլտետն իրականացնում է աշխատանքներ նաև միջազգային համագործակցության ուղղությամբ. մասնակցություն միջազգային գիտաժողովների, հոդվածների հրատարակումներ միջազգային ամսագրերում, մասնակցություն ֆորումների (նաև առցանց), փոխադարձ այցելություններ, հեղինակավոր գիտնականների դասախոսությունների, վարպետաց դասերի կազմակերպում, մասնակցություն ուսանողների փոխանակման ծրագրերին: Այս տարի աշխատանքները փոքր ինչ աշխուժացել են, ի համեմատ նախորդ տարվա (համաճարակով պայմանավորված):

Շարունակվում են ֆակուլտետի բավականին տարաբնույթ և սերտ կապերը Ֆինլանդիայի Օուլու համալսարանի մանկավարժության ֆակուլտետի հետ: Բելառուսի Մաքսիմ Տանկի համալսարանի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպում ենք համատեղ քննարկումներ,

գիտաժողովներ:

Ֆակուլտետը համագործակցում է նաև ՌԴ մի շարք այլ պետական համալսարանների հետ. Մոսկվայի պետական մանկավարժահոգեբանական համալսարան, Չեյաբինսկի պետական մանկավարժական համալսարան, Կազանի պետական համալսարան, Իրկուտսկի պետական համալսարան, Ստավրոպոլի մանկավարժական համալսարանի, նոր համագործակցության համաձայնագրեր ունենք նաև Ռոստովի Հարավային ֆեդերալ համալսարանի հետ:

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնը սերտ համագործակցում է Ուկրաինայի մեր գործընկերների հետ:

Համագործակցությունը սերտացնելու և արտասահմանից ուսանողներ ունենալու նպատակով ֆակուլտետը թարգմանել և անգլերեն տարբերակով [Googl.docx](https://www.google.com/docs/dlx) –ում տեղադրվել է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագիրը: Արձագանքել է մեկ սիրիացի դիմորդ:

Ֆակուլտետի խորհրդի նիստերում հաճախակի քննարկվում են միջազգային համագործակցության հարցերը:

Նախատեսել ենք 2022-2023 ուսումնական տարում ֆակուլտետի միջազգային համագործակցության շրջանակներում շեշտը դնել հետևյալ ուղղությունների վրա.

- բենչմարկինգի իրականացում,
- գիտաժողովների կազմակերպում,
- սեմինարների, վեբինարների կազմակերպում,
- համատեղ հետազոտությունների իրականացում:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ֆակուլտետի միջազգայնացմանը նպաստող աշխատանքներ.

- 1.Աշխատաշուկայում բարձր պահանջարկ ունեցող «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի մշակում օտարերկրյա ուսանողների համար (*Stu' ՀՊՄՀ տեղեկատվական հարթակ*):
- 2.Համագործակցություն Ֆինլանդիայի Օուլու համալսարանի Կրթության ֆակուլտետի հետ՝ համատեղ կրթական ծրագիր ձեռնարկելու համար:
- 3.Մասնակցություն կրեդիտային շարժունության ծրագրերի. Erasmus Plus ծրագրի շրջանակներում 2022 թ.' 2 ուսանող. Ֆինլանդիա, Օուլու համալսարան:

4. Մասնակցություն միջազգային \* գիտաժողովների (*Stu' Սկզբնական կրթության ֆակուլտետի ամբիոնների հաշվետվություններ*):

5. Հրապարակումներ միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում:

Նշված աշխատանքներին զուգահեռ՝ միջազգայնացման ուղղությամբ 2022 թվականին նախատեսվում են նաև հետևյալ աշխատանքները.

1. Համագործակցություն Ղազախստանի ազգային համալսարանի հետ հետևյալ ուղղություններով՝
  - սովորողների ստեղծագործական աշխատանքների համատեղ ցուցադրություններ,
  - ամենամյա ուսանողական միջազգային կոնֆերանսի կազմակերպում,
  - ժամանակակից մանկավարժական մոտեցումների վերաբերյալ on line վեբինարի կազմակերպում:
2. Ֆակուլտետը մշակել է միջազգայնացման տեսլական, համաձայն որի նախատեսել ենք մինչև 2025 թվականը ֆակուլտետի միջազգային համագործակցությունը բարձրացնել նոր մակարդակի:

#### X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:

Ինչպես գիտենք 2022-23 ուսումնական տարվանից ամբիոնների որակի պատասխանատուները իրենց ծանրաբեռնվածության մեջ ունեն որակի ապահովման աշխատանքների իրականացման համար հատկացված ժամաքանակ: Որակի պատասխանատուները պարբերաբար ամբիոններում կատարում են ուսումնասիրություններ, մասնավորապես մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում դասավանդվող առարկաների նկարագրերի բովանդակության մշտադիտարկումներ, դրանց վերջնարդյունքների, առարկայի բովանդակության, առաջադրանքների և գնահատման ձևերի համապատասխանեցման ուղղությամբ: Արդյունքները քննարկվում են ինչպես ամբիոնների նիստերի, այնպես էլ ֆակուլտետի կրթության որակի պատասխանատուների համար նախատեսված հանդիպումների ընթացքում: Այդ հանդիպումները իրականացվում են երկու շաբաթը մեկ և նվիրվում են ինչպես առարկայական նկարագրերի բարելավմանը, այնպես էլ դասավանդման և գնահատման մեթոդների համապատասխանեցմանն ու այլ կարևոր հարցերի:

Կրթության որակի ապահովման ուղղությամբ աշխատանքները ֆակուլտետում և ամբիոններում իրականացվում են սկզբնական կրթության ֆակուլտետի և ամբիոնների գործողությունների՝ ՀՊՄՀ ռազմավարական ծրագրի հիման վրա մշակված պլանի համաձայն: Կրթության որակի ապահովման աշխատանքներում կիրառվում են հետևյալ մեխանիզմները՝ մասնագիտական կրթական ծրագրեր, հետազոտություն և գիտության զարգացում, որակի ներքին ապահովման համակարգ ֆակուլտետում:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի կրթության որակի ապահովման խումբը համագործակցել է համալսարանի ՀՊՄՀ կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի հետ, մասնակցել որակի հարցերին նվիրված քննարկումներին, իրականացրել դասընթացների դասավանդման դիտարկումներ, հիմնականում առցանց, արդյունքների վերլուծության մասին ներկայացրել հաշվետվություններ ամբիոնային նիստերին, նախաձեռնել հանդիպումներ և սեմինարներ ամբիոնների դասախոսների համար:

1. Նշված ուսումնական տարում ֆակուլտետի որակի ապահովման խմբի կողմից ուսումնասիրվել են նոր սերնդի ՈԱՇ-ի պահանջները՝ առարկայական դասընթացների կոմպետենտային համակարգը ձևակերպելու նպատակով: ՈԱՇ-ի պահանջների հիման վրա փոփոխության են ենթարկվել նաև վերջնարդյունքների ձևակերպումները, համապատասխանեցվել են վերջնարդյունքներն ու ԱՌԽՄՓ-ի դասախոսությունների դասավադման և ուսումնառության մեթոդները:

2. Ամբիոններում ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներին նախընթաց վերանայվել, քննարկվել և հաստատվել են բոլոր դասընթացների ուսումնամեթոդական փաթեթները:

3. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի կողմից դիմորդների կրթական կարիքների և աշխատաշուկայի ուսումնասիրության հիման վրա մշակվել ու 2022-23 ուսումնական տարվանից մեկնարկել է «Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագիրը հեռակա ուսուցման համակարգում:

4. Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել են դասախոսների մասնագիտական որակի ապահովմանն ուղղված կարիքները, առանձնացվել որոշ թեմաներ և դրանց շուրջ կազմակերպվել ամբիոնային գիտամեթոդական սեմինարներ (*Տես՝ ամբիոնային նիստերի արձանագրությունները, սեմինարների օրակարգեր*): Այսպես՝ նոր սերնդի ՈԱՇ-ի ներկայացում և քննարկում, ծանոթացում հետազոտությունների կազմակերպման միջազգային փորձին, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով իրականացվող ուսումնական տարատեսակ գործընթացների ներկայացում, դժվարությունների հաղթահարմանը միտված առաջարկների քննարկում:

• Թարմացվել է 2022-23 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրերի ընտրովի դասընթացների բազան, ընդգրկվել են դասընթացներ՝ ուղղված ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը (3-րդ կուրս 2-րդ կիսամյակ), ինչը մեծապես կաջակցի նաև ուսանողների ավարտական աշխատանքների արդյունավետ կատարմանը:

5. Փոփոխություններ են կատարվել մագիստրոսի կրթական ծրագրերի հետազոտական խմբի առարկաների բովանդակության մեջ, ստեղծվել է մագիստրոսի աշխատանքային պլան՝ գնահատման չափանիշներով:

6. Վերանայվել են մագիստրոսի կրթական ծրագրերի մանկավարժական պրակտիկայի առարկայական նկարագրերը, ճշտգրտվել, հստակեցվել են վերջնարդյունքները, ապահովելով պրակտիկաների շարունակականությունը: Դրանք դարձել են առավել ճկուն՝ հնարավորություն տալով ընտրության՝ պրակտիկաները ինչպես բուհում, այնպես էլ դպրոցներում և մանկապարտեզներում կազմակերպելու համար: Սա հատկապես կարևոր է ոչ մանկավարժական

կրթությամբ մագիստրոսների պրակտիկան կազմակերպելու պարագայում:

7. Կրթության որակին նվիրված սեմինարներ են կազմակերպվել նաև ուսանողների համար (3 սեմինար): 2022 թվականի գարնանը կազմակերպվել է ամենամյա միջհամալսարանական ուսանողական առցանց գիտաժողովը՝ նվիրված սկզբնական կրթության հիմնահարցերին (Տես՝ ֆակուլտետի ՈՒԳԸ հարթակը): Գիտաժողովին ներկայացվել են առավելագույն հետազոտական բնույթի աշխատանքներ: Ձեկույցներով հանդես են եկել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր ուսանողները, նաև ասպիրանտները: Խմբագրական խորհուրդն այժմ աշխատում է գիտաժողովի աշխատանքները համակարգելու և առցանց եղանակով տպագրության ներկայացնելու ուղղությամբ:

8. Որակի ապահովման խմբի կողմից մանրամասն ուսումնասիրվել է 2021-22 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները, արվել SWOT վերլուծություն և ներկայացվել ֆակուլտետի խորհրդի նիստի քննարկմանը (Տես՝ ֆակուլտետի խորհրդի նիստի արձանագրությունը):

9. Ամբիոնների որակի պատասխանատուները այս տարվա ընթացքում ամփոփել և ներկայացրել են տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում դասավանդվող առարկաների արդյունքները և որակի ապահովման խնդիրները: Այս համատեքստում այժմ վերանայվում են առարկայական նկարագրերի վեջնարդյունքները, և կատարվում են որոշ փոփոխություններ՝ մասնավորապես առարկայական նկարագրերի վեջնարդյունքները մասնագրերի վերջնարդյունքներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Այս համատեքստում ֆակուլտետի որակի ապահովման խումբը ս.թ. հուլիս-օգոստոս ամիսներին նախատեսել է սեմինարներ ամբիոնների դասախոսների համար (Տես՝ ֆակուլտետի խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 29-ի նիստի արձանագրությունը):

10. Ամբիոնների որակի պատասխանատուները այս ուսումնական տարվա ավարտին ամփոփել և ներկայացրել են տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում դասավանդվող առարկաների արդյունքները և որակի ապահովման խնդիրները: Այս համատեքստում, ֆակուլտետի որակի ապահովման խումբը, մասնակցելով ANQA –ի կողմից կազմակերպած վերապատրաստման դասընթացներին, կազմակերպելու է սեմինարներ վերապատրաստման նյութերով կիսվելու, փորձը տարածելու նպատակով:

11. Ֆակուլտետի որակի ապահովման խմբի կողմից մշակվել է հարցաշար և իրականացվել է ուսանողների կրթական ծրագրերից բավարարվածության մակարդակի վերհանում և վերլուծություն, արդյունքները ներկայացվել են ֆակուլտետի խորհրդի վերջին նիստում: Վերլուծության արդյունքները հաշվի են առնվել ամբիոնների կողմից նոր ուսումնական տարում նախապատրաստվելու ընթացքում:

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:

Կրթության որակի ապահովման գործընթացների արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունն ապահովվում է.

- ֆակուլտետի խորհրդի կազմում նրանց առաջադրմամբ,

- ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում նրանց ներգրավվածությամբ և մասնակցությամբ,
- սեմինարների, տարաբնույթ քննարկումների և ֆոկուս խմբերի աշխատանքներում մասնակցությամբ, որոնց ընթացքում քննարկվում են կրթական ծրագրի բովանդակությունը, վերջնարդյունքները, ձեռքբերումներն ու դժվարությունները (*Տես՝ քննարկումների օրակարգեր, ներկայաթերթիկներ*):

Հաշվետու ժամանակաշրջանում նմանատիպ քննարկումներ են իրականացվել ֆակուլտետի դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանում: Ֆակուլտետի ընդլայնված խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվում են կրթության որակի ապահովման հարցերը, վերհանվում կարիքները, նախանշվում դրանց բավարարման ուղիները:

**Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)**

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ֆակուլտետի գործունեության համապատասխանությունը համալսարանի առաքելությանն ու նպատակներին:	Ոչ բոլոր դասախոսների ակտիվ ներգրավումը գործընթացներին:
Ֆակուլտետի գործունեության համապատասխանությունը ռազմավարական ծրագրի գործողությունների ուղղություններին:	Ամբիոնների գործունեության կազմակերպումը նեղ առարկայական ուղղությամբ:

<p>Ֆակուլտետի համագործակցությունը համալսարանի ստորաբաժանումների, գործատուների և գործընկերների հետ:</p>	<p>ակտիվ ինչպես տարբեր այնպես էլ միջազգային</p>	<p>Գործատուների ոչ թիրախային մասնակցությունը բուհում իրականացվող աշխատանքներին: Միջազգային համագործակցության նեղ շրջանակները սակավ նյութական պայմանների պատճառով: Երկու լեզվով դասավանդող դասախոսների փոքր թիվը:</p>
<p>Ֆակուլտետի թափանցիկությունն արագ արձագանքումը նոր կարգերի, հրամանների, ներկայացմանն ու դրանց մասին տեղեկատվության ֆակուլտետի ամբիոններին և դասախոսներին:</p>	<p>գործունեության ու</p>	<p>Գերձանրաբեռնվածությունը:</p>
<p>Ֆակուլտետի պլանավորում համապատասխանությունը շրջափուլին:</p>	<p>գործունեության ու դրա ՊԻԳԲ</p>	<p>Ոչ բոլոր ստորաբաժանումների հետևումը շրջափուլին:</p>
<p>Ֆակուլտետի ակտիվ գործունեության աշխատանքներում:</p>	<p>կողմից ներգրավումը ֆակուլտետի տարբեր ուսանողների և տարբեր աշխատանքներում:</p>	<p>Ուսանողների թույլ նախաձեռնողականություն ու մոտիվացիան:</p>
<p>Ֆակուլտետում տարաբնույթ արդյունավետության հետադարձ կապի, կազմակերպվող</p>	<p>կազմակերպվող աշխատանքների գնահատումը ինչպես նաև քննարկումների</p>	<p>Նույն մարդկանց մասնակցությունը քննարկումներին և վերլուծություններին:</p>

<p>միջոցով:</p>	
<p>Մանկավարժական պրակտիկաների բոլոր փուլերի կազմակերպման հստակ պլանավորումն ու դրանց համապատասխանումը ՄԿԾ-ի վերջնարդյունքներին:</p>	<p>Մանկավարժական պրակտիկաների արդյունքների վերլուծության ընթացքում կատարված առաջարկությունների ներդրման դանդաղ ընթացքը:</p>
<p>Կատարվող աշխատանքների մշտադիտարկումն ու վերլուծությունը:</p>	<p>Ինքնավերահսկողության մեխանիզմների բացակայությունը:</p>
<p>Շարունակական բնույթ կրող համագործակցությունը, արդյունքների քննարկումն ու վերլուծությունը գործատուների հետ:</p>	<p>Գործատուների կողմից աշխատանքներին մասնակցելու թույլ մոտիվացիան: Դրանց կազմակերպման կարևորության գիտակցման ցածր մակարդակը:</p>
<p>Կրթության որակի բարելավման ուղղությամբ ֆակուլտետի կողմից իրականացված հետևողական աշխատանքն ու բարելավման նպատակով կատարված առաջարկությունները:</p>	<p>Առաջարկությունների ներդրման արդյունքների մասին հաշվետվողականության բացակայությունը:</p>
<p>Ուսանողների շրջանում իրականացվող հարցումներն ու դրանց հիման վրա ՄԿԾ-ների բարելավումը:</p>	<p>Ուսանողների կողմից հարցումներին մասկացելու մեխանիկական և ձևական բնույթը:</p>

<p>Դասավանդման մեթոդների շուրջ իրականացվող շարունակական աշխատանքը:</p>	<p>Մասնագիտացմանը համապատասխան ամբիոնների կողմից մշակված դասավանդման ընդհանուր մեթոդաբանության բացակայությունը: Ընդհանուր մոտեցումների բացակայությունը:</p>
<p>Գրագողության և ցիտման նորմերի շուրջ իրականացվող սեմինարն ու այլ աշխատանքների կազմակերպումը:</p>	<p>Սեմինարների և այլ աշխատանքների արդյունքների ներդրման թույլ մոտիվացիան:</p>
<p>ՄԿԾ-ների շուրջ աշխատանքների կազմակերպման ընթացքում միջազգային փորձի ուսումնասիրությունն ու ներդնումը:</p>	<p>Ընդհարական մոտեցումների և մոտիվացիայի բացակայությունը:</p>
<p>Ֆինլանդիայի Օուլու համալսարանի հետ սերտ համագործակցությունը:</p>	<p>Համագործակցության ուղղությունների ընդլայնման թույլ հնարավորությունները:</p>
<p>Ֆակուլտետի դասախոսների գիտական և հետազոտական աշխատանքները: Ամբիոնների հետազոտության ուղղություններով աշխատանքի առկայությունը:</p>	<p>Հետազոտությունների շուրջ գիտական դպրոցների ստեղծման, նորույթների մասին հանրության, մանկավարժական հանրության շուրջ դրանց արդյունքների տարածման մեխանիզմների բացակայությունը:</p>
<p>Ֆակուլտետի կողմից դպրոցներ այցերի և դպրոցներից աշակերտներին համալսարան հրավիրելու շուրջ իրականացվող աշխատանքները /դիմորդների հետ իրականացվող աշխատանք/:</p>	<p>Տարեցտարի դիմորդների թվի նվազումը (ազգաբնակչության սոցիալական ոչ բավարար վիճակ, արտագաղթ, մանկավարժի մասնագիտության ցածր վարկանիշ, գրավչության անկում և այլն):</p>

<p>Լսարանային ֆոնդ և մեդիասարքավորումներով լսարաններ:</p>	<p>Innostud.am կրթական հարթակի վերագործարկման և թարմացման անհրաժեշտություն:</p>
<p>Հասարակական և կամավորական աշխատանքների կազմակերպում՝ ուսանողների ներգրավմամբ:</p>	<p>Ուսանողների մոտիվացիայի բացակայությունը:</p>
<p><b>Հնարավորություններ</b></p>	<p><b>Վտանգներ</b></p>
<p>Միջազգային համագործակցության ընդլայնման հնարավորություն ըստ մասնագիտացումների:</p>	
<p>Գործատուների հետ կապերի ընդլայնման միջոցով ՄԿԾ-ի բարելավում:</p>	<p>ՄԿԾ-ների և աշխատաշուկայի պահանջների անհամապատասխանություն:</p>
<p>Միջազգային համագործակցության միջոցով հետազոտական, գիտական փորձի ընդլայնում և հարստացում:</p>	

**Աշոտ-Տեր Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն**

1. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:

Ըստ ուսումնական աշխատանքների ծավալի և ծանրաբեռնվածության՝ հաշվետու տարում ամբիոնն ունեցել է 7553ժամ: Ուսումնական տարվա համար նախատեսված աշխատանքների ծավալն ամբողջությամբ կատարված է ինչպես առկա, այնպես էլ հեռակա կրթության համակարգերում (ԲԿԾ, ՄԿԾ): <<Մասնագիտական- առարկայական ներամբիոնային ենթախմբերը>> մշտապես ուսումնասիրել են բոլոր առարկայական փաթեթները, դրանց բովանդակությունը արդիականացրել և երաշխավորել են ներբեռնման:

Նախագծված ծրագրային խնդիրների իրականացումը և որակական մակարդակը մշտադիտարկելու նպատակով իրականացվել են փոխադարձ դասալսումներ և առարկայական սեմինարներ:

Հաշվետու տարում ԲԿԾ< 5-րդ կուրսի 2 ուսանող վերադարձել է տարկետումից / Ապերյան Հեղինե, Ավետիսյան Տաթևիկ/, նրանց ավարտական աշխատանքներն ամբիոնի դասախոսները ղեկավարել են՝ ունենալով լրացուցիչ անվճար ծանրաբեռնվածություն:

Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:

Ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերը, թեմատիկ պլանավորումներն ու առարկայական փաթեթները լրամշակվել են, քննարկվել <<Մասնագիտական- առարկայական ներամբիոնային ենթախմբերում>> և երաշխավորվել են հարթակում ներբեռնման: Հաշվետու տարում ՄԿԾ և ԲԿԾ համակարգերի համար ստեղծվել և ներդրվել են երկուական նոր դասընթացներ:

1.<<Վերջնարդյունքահեն մոտեցումը մայրենիի ուսուցման գործընթացում>> , հեղինակ՝ մ.գ.թ. ,դոցենտ Ա. Բալայան, ՄԿԾԱ -2րդ կուրս:

2.<<Կրթական հարթակների գործածումը բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում>>, հեղինակ՝ Բ.գ. թ. դոցենտ, Լ. Ավագյան ,ԲԿԾԱ-4րդ կուրս

Առցանց ուսումնական գործընթացի անցնելու կապակցությամբ վերանայվել են ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերը և առարկայական փաթեթները՝ դրանք հարմարեցվել են կրթության նոր ձևաչափին, դասախոսությունները հարստացվել են սահիկաշարերով, իսկ գործնական պարապմունքները՝ տեսադասերով:

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Պայմանավորված առերես քննությունները երբեմն առցանց կազմակերպելու հանգամանքով՝ ուսանողների ձեռք բերած գիտելիքների և կարողությունների գնահատման բաղադրիչները վերանայվել են փոփոխության են ենթարկվել միջանկայլների և քննությունների առաջադրանքների փաթեթներն ու քննական տոմսերը. դրանք դարձել են ավելի գործնական, չափելի և գնահատելի՝

ապահովվելու համար ուսանողների ինքնուրույն գործունեությունն ու ակադեմիական ազնվությունը:

Ուսումնական տարվա սկզբին <<Հայոց լեզու>> և <<Մայրենիի դասավանդման մեթոդիկա>> առարկաներից անցկացրել ենք ԲԿԾԱ 3-րդ կուրսի ուսանողների <<մնացորդային գիտելիքների>> ստուգում: Արդյունքների ամփոփումը ցույց տվեց, որ ուսանողների կողմից մասնագիտական գիտելիքների և կարողությունների յուրացումն ու իմաստավորումը գտնվում են բավարար մակարդակի վրա: Առկա բացթողումների շտկման և աշխատանքների լրամշակման նպատակով մշակվել են և ուսանողների շրջանում կիրառվել անհատական աշխատանքներ:

Ուսանողների ուսումնական գործունեության արդյունքների գնահատման մեթոդներն ու չափանիշները համապատասխանում են համալսարանում ընդունված և առարկայական փաթեթներում նշված բաղադրիչներին: Գնահատման ակադեմիական մակարդակի ապահովման նպատակով միջանկյալ գրավորների և ամփոփիչ քննությունների առարկայական թեստերն ու տարբերակները քննարկվել են <<Մասնագիտական- առարկայական ներամբիոնային ենթախմբերում>> :

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Հաշվետու տարում հրավիրվել է ամբիոնի 13 նիստ, որոնց ընթացքում քննարկվել է շուրջ 60 հարց, որոնց ուղղությամբ ընդունվել մի շարք որոշումներ:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Արձ.Ն, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
Արձ. հմ. 8 27.05.2022	<p><b>Ամբիոնում փոխադարձ արդյունքների քննարկում:</b></p> <p><b>Իրականացված դասալսումների</b></p> <p><b>Չեկուցող՝ ամբիոնի դասախոսներ</b></p>	<p>1. Դասախոսների հաղորդումներն ընդունել ի գիտություն:</p> <p>2. Ամբիոնի դասախոսների համար կազմակերպել սեմինար պարապմունք &lt;&lt; Էլեկտրոնային առաջադրանքների գործիքակազմի մշակման տեխնոլոգիաների առանձնահատկությունները&gt;&gt; թեմայով:</p> <p>3. Հանձնարարել &lt;&lt;Առարկայական մասանխմբերի&gt;&gt; ղեկավարներին մշտապես քննարկել դասավարման ընթացքում ծագած խնդիրները և աջակցել դրանց հաղթահարմանը:</p>

<p>Արձ. հմ. 8 27.05.2022</p>	<p><b>&lt;&lt;Մանկավարժություն&gt;&gt; ՈՈՇ բնութագրերի հիման վրա առակայական փաթեթների &lt;&lt; Վերջնարդյունքներ&gt;&gt; բաղադրիչի լրամշակման մասին: Զեկուցող՝ Զ. Գյուլամիրյան</b></p>	<p>1. Բարեխղճորեն մասնակցել առարկայական փաթեթների լրամշակմանը նվիրված ուսումնական մասի կողմից առաջիկայում կազմակերպվող սեմինարին:</p> <p>2. Ծանոթանալ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թվականի ապրիլի 22-ի հմ783Աի հրամանին և մինչև 2022 թվականի օգոստոսի 20-ը լրամշակել առարկայական փաթեթները՝ հաշվի առնելով վերոնշյալ հրամանի բովանդակությունը:</p> <p>3. Առարկայական փաթեթների լրամշակման աշխատանքերին մասնակից դարձնել նաև տվյալ դասընթացի գործնական պարապմունքերը վորող դասընթացը վարող դասախոսներին:</p>
<p>30.08.2022 ՀՄ.1</p>	<p>Աշխատանքային և կատարողական կարգապահության նոր կանոնների մասին: Զեկուցող՝ Զ. Գյուլամիրյան</p>	<p>1. Զ. Գյուլամիրյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:</p> <p>2. Հանձնարարել ամբիոնի բոլոր դասախոսներին՝</p> <p>ա. Ծանոթանալ համալսարանի&lt;&lt; Աշխատանքային և կատարողական կարգապահության կանոններին&gt;&gt; և պահպանել ներկայացված պահանջները:</p> <p>բ. Փոխդեկանին ներկայացնել այլ հաստատություններում իրականացվող աշխատաժամերը՝ դասացուցակի կազմման ժամանակ դրանք հաշվի առնելու համար:</p> <p>գ. Նոր ուսումնական տարվա դասացուցակին ծանոթանալ նախապես, ճշգրիտ և բարեխղճորեն իրականացնել աշխատանքային գործունեությունը:</p>

<p>19.09.2022 Հմ.2</p>	<p>Սկզբնական կրթության ֆակուլտետի &lt;&lt;Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա&gt;&gt; մասնագիտության ԲԿԾԱ 3-րդ կուրսի ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման հարցաշարի քննարկում և հաստատում: / &lt;&lt;Մայրենի լեզու&gt;&gt;, &lt;&lt;Մայրենիի ուսուցման մեթոդիկա&gt;&gt;/ առարկաներից</p>	<p>1. Հաստատել ԲԿԾԱ 3-րդ կուրսի ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման հարցաշարը:</p> <p>2. 2022թվականի սեպտեմբերի 26-ին կազմակերպել նշված առարկաներից ԲԿԾԱ 3-րդ կուրսի ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգում:</p>
<p>19.09.2022 հմ.2</p>	<p>Սկզբնական կրթության ֆակուլտետի «Մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության ԲԿԾԱ 3-րդ կուրսի շարունակական և 4-րդ կուրսի ամփոփիչ-գնահատող պրակտիկաների նախապատրաստման մասին:</p>	<p>Մինչև 2022 թ. սեպտեմբերի 30-ը ԲԿԾԱ 3-րդ կուրսերում ուսանողների մնացորդային գիտելիքների և կարողությունների ստուգում անցկացնել «Հայոց լեզու և գրականություն» և «Մայրենիի դասավանդման մեթոդիկա» առարկաներից: Արդյունքները վերլուծել, համակարգել և տվյալ առարկաների դասընթացների ընթացքում ծրագրավորած աշխատանք տանել ուսանողների դժվարությունների պարզեցման և չյուրացրած նյութերի ուսումնասիրման ուղղությամբ:</p> <p>2. Ուսումնական տարվա առաջին շաբաթներում 3-րդ և 4-րդ կուրսերում ուսանողների հետ քննարկել տարրական դպրոցում մայրենիի դասերի խնդիրները, դասերին ներկայացվող արդի պահանջները, դասի պլանները և ձևավորել անհրաժեշտ նյութերի փաթեթ:</p> <p>3. 4-րդ կուրսի ուսանողներին (որոնք ավարտական աշխատանք են գրում «Մայրենիի դասավանդման մեթոդիկա» առարկայից) հանձնարարություններ տալ ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ, աջակցել նրանց</p>

		մշակելու հետազոտական աշխատանքի պլան և հետամուտ լինել մանկավարժական պրակտիկայի ընթացքում նրա իրականացմանը:
19.09.2022 հմ.2	<p>&lt;&lt;ՊՄՀ-ի 2022-2025 թվականների ռազմավարական ծրագրի&gt;&gt; քննարկում:</p> <p>Ջեկուցող՝ Ա. Միքայելյան</p>	<p>1.&lt;&lt;ՊՄՀ 2022-2025 թվականների ռազմավարական ծրագրի&gt;&gt; բովանդակային պահանջներն ընդունելի գիտություն:</p> <p>2.Ամբիոնի 2022-23 ուսումնական տարվա աշխատանքային պլանը կազմելիս հաշվի առնել նաև նշված ծրագիր դրույթները:</p> <p>3Հանձնարարել ամբիոնի դասախոսներին իրենց առարկայական փաթեթները լրամշակելիս առաջնորդվել նաև Համալսարանի 2022-25 թվականների ռազմավարական ծրագրի դրույթներով:</p>
20.10.2022 Հմ.3	<p>ԲԿԾԱ 1-ին կուրսի ուսանողների մեկնարկային գրագիտության մակարդակի ստուգման արդյունքների քննարկում:</p> <p>Ջեկուցող՝ Ա. Ավագիմյան</p>	<p>1.Ա. Ավագիմյանի հաղորդումն ընդունելի գիտություն:</p> <p>2.Հանձնարարել ԲԿԾԱ 1-ին կուրսում &lt;&lt;Հայոց լեզու և գրականություն&gt;&gt; առարկան դասավանդող դասախոս Ա. Ավագիմյանին՝ մշակել հայոց լեզվից ցածր ակադեմիական գիտելիքներ և կարողություններ ունեցող նշված կուրսի ուսանողների հետ լրացուցիչ պարապմունքների ծրագիր և իրականացնել համապատասխան աշխատանք:</p>

Պրոֆեսորադասախոսական կազմը

	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	13	2	1	11	11	--	1	13
Համատեղող	2	1	--	--	1	-	--	2
Ժամավճարային	--	--	--	--	--	--	--	--
Ընդամենը	13	2	1	11	11		1	13

## 2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

<p>Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:</p> <p>Ամբիոնի գծով դասավանդվող բոլոր դասընթացները ԲԿԾ-ում և ՄԿԾ -ում ունեն հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում մայրենիի դասավանդման բովանդակային ուղղվածություն, ինչպես նաև ժամանակակից հայոց լեզվի և մայրենիի դասավանդման մեթոդիկայի հիմնահարցերին միտված ուղղություններ, իսկ ՄԿԾ-ում՝ մանկավարժահոգեբանական արդի հիմախնդիրներին առնչվող գիտական հիմնարար հարցեր: Այս դասընթացների փաթեթները մշտապես քննարկվում են առարկայական մասնախմբերում, ապա նոր երաշխավորվում ներբեռնման:</p> <p>Ամբիոնն ունի ԲԿԾՀ, ԲԿԾԱ, ՄԿԾՀ, ՄԿԾԱ բաժիններում դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը, որոնք համապատասխանում են ներկայացված մասնագիտական ելքային արդյունքներին:</p> <p>Ամբիոնն ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և փոխներգործուն մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ: Սկզբնական կրթության և Հատուկ կրթության ֆակուլտետներում դասավանդվող 2 տասնյակից ավելի դասավանդվող դասընթացների առարկայական փաթեթները ստեղծվել են աշխատանքային խմբերում, որոնց կազմում ընդգրկված են դասախոսության նյութերի հեղինակը և գործնական վարող դասախոսներ: Բոլոր առարկայական փաթեթները դիտարկվել են մասնագիտական ելքային արդյունքների տեսանկյունով, առաջարկությունների հիման վրա լրամշակվել են, և ներբեռնվել:</p> <p>Հաշվետու ժամանակաշրջանում ամբոնի դասախոսներն իրականացրել են ՀՀ ԿԳՍՄ նախարարության կողմից իրականացրած ՀՀ դպրոցների տարրական դասարանների և Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումներ:</p>
--

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
3	2		2	2	

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
3						2			

### 3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

<p>Ամբիոնի հետազոտական գործունեությունը:</p> <p>Ամբիոնի դասախոսների հիմնական մասի հետազոտական ախտաանքները, դրանց արդյունքում տպագրած դասագրքերը, ուսումնաօժանդակ ձեռնարկներն ու հոդվածներ վերաբերում են տարրական դպրոցի հիմնախնդիրներին, ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության առանձնահատկություններին՝ /առավելապես՝ մայրենիի ուսուցման մեթոդիկայից/:</p> <p>Ամբիոնի դասախոսները հետազոտական գործունեություն են իրականացրել հետևյալ երեք ուղղություններով.</p> <p>ա.&lt;&lt;Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացումը ծրագիր, դասագիրք և ուսումնաօժանդակ գրականության շրջանակներում&gt;&gt;.</p> <p>բ.&lt;&lt;Ժամանակակից հայոց լեզվու&gt;&gt; և &lt;&lt; Մայրենիի ուսուցման մեթոդիկա &gt;&gt; բուհական դասընթացների արդիականացում ուսանողակենտրոն մանկավարժական կրթության համատեքստում&gt;&gt;:</p> <p>գ.&lt;&lt;ԿԱՊԿՈՒ երեխաների շրջանում մայրենիի ուսումնասիրման գործընթացի մեթոդական առանձնահատկությունները և դժվարությունների հաղթահարման հնարները&gt;&gt;:</p> <p><b>Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակա հետազոտական աշխատանքները, հրապարակումները,</b></p>
--

<b>անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:</b>
Ամբիոնի դասախոսները մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների շրջանակներում ուսանողներին աջակցել են և ուղղորդել տարրական դասարաններում հետազոտական- որոնողական աշխատանքներում: Այս համատեքստում ֆակուլտետի տասնութ ուսանող զեկուցումներով մասնակցել է <<Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները>> վերնագրով ՈւԳԸ գիտական նստաշրջանին: Տասնութ ուսանողի հոդվածներն էլ տպագրվել են գիտական <<Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները>>վերնագրով ժողովածուում:
Ամբիոնի մի խումբ դասախոսներ իրենց հետազոտական թեմաների շուրջ ուսումնասիրություններ են կատարել բուհական կրթության ոլորտում / Լ.Ավագյան, Զ. Գյուլամիրյան, Ա. Ավագիմյան, Տ. Ենոքյան/, հաշվետվությամբ հանդես են եկել ամբիոնի նիստերում և հոդվածներ են հրատարակել ինչպես հանրապետական, այնպես էլ՝ միջազգային մամուլում::

**Ա. Պրոֆեսորադասախոսական**

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
ա.<<Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացումը ծրագիր, դասագիրք և ուսումնաստանողական գրականության շրջանակներում>>	Կիրառական	-	-----	Զ. Գյուլամիրյան, Մ.Միրումյան,Լ.Տեր-Գրիգորյան,Ա.Բալայան,
բ.<<Ժամանակակից հայոց լեզվո>> և << Մայրենիի ուսուցման մեթոդիկա >>	Կիրառական	-----	-----	Լ.Տեր-Գրիգորյան, Լ.Ավագյան, Ա.Ավագիմյան,

բուհական դասընթացների արդիականացում ուսանողակենտրոն մանկավարժական կրթության համատեքստում>>				Վ. Ներսիսյան, Զ. Գյուլամիրյան, Մ. Միրումյան և այլք:
գ. <<ԿԱՊԿՈՒ երեխաների շրջանում մայրենիի ուսումնասիրման գործընթացի մեթոդական առանձնահատկությունները և դժվարությունների հաղթահարման հնարները:	Կիրառական			Ա. Միքայելյան, Լ. Ավագյան

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
_____	_____	_____	

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Գյուլամիրյան Զ.	<<ՆԱԽԱԾԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱ ԴԱՍՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ>>,  <ՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր:	7

Միրումյան Մ., Խաչատրյան Ս	<<Գիշեր և ցերեկ ժամանականիշ բառերի դարձվածակազմիչ արժեքն արդի հայերենում>>, <<Հայագիտական հանդես>> ՀՄ 3-4, Երևան:	8
Միրումյան Մ.	<<Ժամանականիշ բառերի և տարվա եղանակների անվանումների մակդրային արժեքն արդի հայերենում>>, ԼՂՀ <<Մեսրոպ Մաշտոց Համալսարան Լրատու>>, ՀՄ. 2:	10
Միրումյան Մ.	<<Գիշեր և ցերեկ ժամանականիշ բառերով դարձվածային միավորների տարբերակներն արդի հայերենում>>:  <<Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա, ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, պրակ Գ>>:	10
Խաչատրյան Ս.,	<<Համանուն ածանցների ուսուցման մեթոդիկան>>,  <<Հայագիտական հանդես>՝ 3-4, Երևան:	12
Միքայելյան Ա.	<<Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման գործընթացի արդյունավետության բարձրացմանը նպաստող նորարարական մոտեցումներ>>,  ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր:	9
Ավագիմյան Ա.	<<Բառերի կապակցելիության շուրջ աշխատանքը կրտսեր դպրոցականի խոսքի զարգացման գործընթացում>>,  <<ԳԱԱ Զահուկյանական ընթերցումների ժողովածու>>:	13
Մնացականյան Ե.	<<Гевонд Алишан и Хримян Айрик в воспоминаниях современников, Евразийский союз ученых. >>, Санкт-Петербург №01 (94)	15
Մնացականյան Ե	<<Յովհաննէս Թումանեանի մանկական գործերի արժեւորումը «Մանկական գրադարան» մատենաշարի շրջանակում>>, Հանդէս ամսօրեայ, Վիեննա:	25
Մնացականյան Ե	<<Հ. Թումանյանի ուղևորությունը Պոլիս. մտավորականության արձագանքը>> ,Գրականագտական հանդես>>, հատոր ԻԴ:	22
Մնացականյան	<<Изучение литературных базовых знаний в начальных классах>>,ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր:	15

Մնացականյան Ե.	<<Հովհաննես Թումանյանը Սերգեյ Նարովչատովի գնահատմամբ>>, Сборник научных статей, Երևան:	9
Մնացականյան Ե.	<<<<Երեքի>> դեկլարացիան ժամանակի քննադատության բանավեճի թիրախ>>: Հայագիտական հանդես 3-4/57-58/	20
Ավագյան Լ.Մ.	«Դարձվածքները Ջիվանու ստեղծագործություններում», Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, «Սուրբ Մեսրոպ Մաշտոցը և հայ դպրոցը» խորագրով գիտաժողովի նյութեր>>:	9
Ավագյան Լ.Մ., Ենոքյան Տ.Վ.,	«Հեքիաթը որպես մեդիագրագիտության ձևավորման միջոց», Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները>>:	12
Ներսիսյան Վ.	<<Ածանցման հարցերի քննությունը Մանուկ Աբեղյանի աշխատություններում>>,ԳԱԱ ԼԻ «Ջահուկյանական ընթերցումների ժողովածու»:	12
Ներսիսյան Վ.	<<Բաղադրյալ բառերի դասակարգումը Մանուկ Աբեղյանի աշխատություններում>>,<<ԳՊՀ գիտական պարբերական>>:	11
Աղաբաբյան Կ.	ДИНАМИКА НАПРАВЛЕННОГО РАЗВИТИЯ ЧУВСТВА ЯЗЫКА СТУДЕНТОВ ПЕДАГОГИЧЕСКИХ ВУЗОВ И УЧАЩИХСЯ НАЧАЛЬНОЙ ШКОЛЫ, Сб. трудов межд. конф. Инновационные процессы в социально-гуманитарных науках и образовании. М. 2022 НИУ МГСУ МОСКВА РОССИЯ	13

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
<<Էլեկտրոնային առաջադրանքների գործիքակազմի մշակման տեխնոլոգիաների առանձնահատկությունները>>, սեմինարավար՝ Բ.Գ.Թ.Դոցենտ Լ. Ավագյան	Ա. Տեր-Գրիգորյանի անվան Մայրենիի և նրա դասավանդման մեփոդիկայի ամբիոն 17.06.2022թ:

<<Հետազոտական աշխատանքի կազմակերպման փուլերը և քայլաշարի բովանդակությունը>>:  սեմինարավար՝ Բ. Գ. Թ. Դոցենտ Ա. Ավագիմյան	Ա. Տեր- Գրիգորյանի անվան Մայրենիի և նրա դասավանդման մեփոփկայի ամբիոն  12.12.2022թ:
---	--

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ			
Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական-մասնագիտություն	Պաշտպան ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում
Մնացականյան Եվա	դոկտորական ատենախոսություն, <<Թեման՝ <<<.Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ:>>	10.12.2021	05.12.2022

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
—	—	—	—

Բ. Ուսանողական

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ			
Ամբիոնը համագործակցում է ֆակուլտետի ՈԻԳ-ի աշխատանքերին՝ ուսանողներին մասնակից			

դարձնելով ֆակուլտետում կատարվող աշխատանքներին:			

